

### ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ

Ա. Յ. ՊԱՐՐԻԼԵԱՅ

### ԳԼՈՒԽ Դ.

#### ԱՄԵՆ ԱՏԵԱՆ.

Երբ առաւօտեան բոցափայլ աստղն իստար՝ կը գունատէր, և երկինքն կը պայծառանար հորիզոնին վրայէն, Շամիրամայ արբունեաց հեռագոյն հովանոցին վրայ մարդ մը տեսնուեցաւ, որ կամ թլնամի էր կազդուրիչ քնոյ, և կամ վայելել կ'ուզէր առաւօտեան քաղցրաշունչ անապահան օդը:

Հասակազեղ ու յաղթանդամ մարդ մ'էր: Մարմնոյն վրայէն սեւագոյն պատմուճան մը հագած էր սոկեթի վերջաւորք, որուն լայն թեզանիքը մինչև մէջքը կ'իջնային. ճակտին վրայ պսականման օսկիածոյ մաղկապ մը կը կրէր, որուն եզերքներէն թանձրախիտ ու գանգրագեղ մազերն մինչև պարանոցը կ'երկայնէին. Քաւէր մօրուքը, թխատեսակ և ոլորուն, որ մինչև կրծոցը վրայ իջնալով, գծնեայ վսեմութիւն մը կու տար գիմացը, արդէն իսկ նշանաւոր իր կազմութեամբն ու գորշագոյն փայլունութեամբ, հսկառակ շրթանցը ծիրանագոյն պայծառութեան, և յօնից ու արտեանանց թխութեան, որոց տակէն բոցածաճանչ կը ճառագայթէին աչքերը, Խիստ էր անոր զեղեցկութիւնը, զեղեցկութիւնն ազնուական, գուռոզ ու ցուրտ մտնեզամայն, զարմանալի բայց ոչ սիրելի: Այսպէս էին մեհնեաց չորս կողման վիմատաշ արձաններն, այսպէս բարելական որմոց երկայնութեամբ քրմաց ու թագաւորաց զէմբերն, որոնք զեղեցկի էին բայց գծնեայք ու ահարկուք:

Վիմակոյի աստուծոյ մը նման՝ երկար ատեն կեցաւ անշարժ հովանոցին վրայ, թեքը լանջացը վրայ ընդգրկած, և զիտեց երկնից ոլորաքը, ուսկից կը ծաւալէր ոտն առ ոտն լուսոյ լայն դիմ մը, նախ քրքրեմագոյն և ապա ծիրանագոյն, շրջապատելով նեմաստուեր գաշտավայրը:

Չուարթ լէր այդ մարդը, զոր կը վկա-

յէին կնճռեալ յօնրն ու անթարթափ աչքերն. կը կարծէր տեսնողն թէ գուցէ այն անտեսանելի երկիրը կը փնտռէր՝ ուսկից կը ծնանի արևը. մինչդեռ թերևս մտայոյզ՝ միջամուխ կ'ըլլար խորհրդոց անհնտագօտ խորշերը: Կեցեր էր հօն գիտելով ու խորհելով. ինքն իրեն ամիտօւած, իբրև խաւարնոյդ արձան մը՝ որ լուսոյ կը սպասէ, կամ իբրև մոլորեալ հոգի մը՝ որ ընկճեալ ՚ի պատահարաց՝ խորհրդատու մը կը փրնտուէ:

Քանի մը վայրկենէն առաւօտացաւ. աւտիական ճաճանչագեղ արևը յանկարծ ծագեցաւ հորիզոնին վրայ, և բարձրանալով հսկայակերպ կապուտակ երկնից երեսը՝ սփռեց իր ճառագայթները քաղցրանիմլ քաղցրին վրայ, և ցոլացաւ ՚ի զանազան կողմանս, արտափայլելով քաբելոնի գմբեթաց, բրգանց ու աշտարակաց վրայէն:

Այս տեսարանը շարժեց զանշարժն իր խորախորհուրդ անշարժութենէն. դարձաւ վիմաշէն բագնոյն որ կանգնած էր հովանոցին միջավայրը. որոնեց ու գտաւ կրակարանին մոխրոյն տակ քանի մը վատ ածուխներ. քովէ քով բերաւ զանոնք, դիզեց վերան խուր գեղեցիկ կարգով, և փչեց կրօնական բարեպաշտութեամբ: Քիչ ատենէն արծարծեցաւ բոցն և սկըսաւ ճարճատել անբ փնտնելով չորացեալ ճիւղոց միջէն: Այս ատեն ծունկ չըքեցաւ նա, և ձեռքերը բարձրացնելով առ բոցածաւալ հուրրն, առթոթեց սպալէս առ կենսատուն համագոյից:

— « Կը կոչեմ զքեզ յօգնութիւն յանուն ամենաջինջ բոցոցս, կը պաշտեմ՝ զքեզ, Ահուրամազդ արայրագործ. լուսապայծառ ու հրաշափայլ, մեծք և ընտրեալը, կատարեալը ՚ի գործն քո, միտք ու գեղեցկութիւն անհամեմատ, ընդունարան ճշմարիտ իմաստութեան, ազբիւր բերկրութեան, դու որ ստեղծեցիր զմեզ, ձևացուցիր ու սնուցիր, դու սուրբք, դու իմաստունք՝ ՚ի մէջ արարածոց:

« Ի՞նչ ճշմարիտ ես, դու պայծառ ու լուսատու, դու առաջին պատճառ ամենայն լաւութեանց, դու ինքն ես պատճառ բնու-

Թեան կենդանութեանը, և այն ամեն բաներու՝ որ կը ծնանին իր բազմաբեղուն ծոցէն, զու առաջին սկիզբն լուսու որ մարմնոց, և այն ամենայն իրաց՝ որ կը փայլին իրերայւոյս։ Դու քան ստեղծիչ, էացեալ յառաջ քան զերկինս և զերկիր, նայք քան զլուր և զծառ, զցուլ և զհուր որդի բո, յառաջ քան զմարդ ճշմարտախօս, յառաջ քան զԿիւայս և զմնակիր կենդանիս, յառաջ քան զտիեզերս, յառաջ քան զամե, նայն բարիս 'ի քէն եղևաւ, զու որ ծնար 'ի ճշմարտութեան։

« Ինչպէս բանն գերագոյն կամաց՝ նոյնպէս և սրգասիքն կը տեսն, վասն զի յառաջ քան 'ի ճշմարտութենէ։ Ար ինչ բարի է 'ի խորհրդեան ու յսկութեան և անոնց ստեղծումը՝ Մաղգայի կը վերաբերի աշխարհիս մէջ, իսկ թագաւորութիւնն՝ Ահուրայի է, որ կարգեց իր սեփական Բանը կործանիչ նշարաց։

Գտնելի վրայ եկած այս աղօթքները ընելն ետքը, որուն վերջի մասը պարտաւորեալ էին Ահուրամազդայ բորմնին օրուան մէջ հարիւր անգամ կրկնելու, բազնոյն տակէն արծարթակու բաժակ մը հանելով, քամեց մէջը ամոմի հոյզը։ Ասիկա ոտաւից թուփ մ'էր, որ երգնից մասնաւոր առանձնայնորհուրթեամբ կը կրէր Իրանի սրբազան լեզուին մէջ Աստուծոյ ամենակէն անունը։ Անոր համար Հոմ առաջին ծառը կը համարուէր 'ի տունկս, ինչպէս ցուն 'ի կենդանիս։ Ետիրեալ բազնոյն վրայ՝ Աստուծոյ մի և նոյն գոյութիւնն էր, արբեալ 'ի բրմէն՝ էր նոյն ինքն Աստուած որ կը խոնարհէր 'ի սիրտ մարդոյ։

— « Առ քեզ կ'ուղղեմ իմ աղօթքս, ով Հոմ, ընտրեալդ Հոմ, որ կու տաս արդարութիւն, մաքրութիւն ու փրկութիւն, վայելչագեղչ, պայծառակերպչ ու յաղթականչ։ »

Եւ քամելով հոյզը բաժակին մէջ, վերուց զայն երկու ձեռքով գէպ 'ի բոցն, և թափելով անկէջ քանի մը կաթիլ վառեալ ամուրիներուն վրայ՝ ըստ։

— « Փորանակ այս մէկ բաժակին զոր կը նուիրեմ քեզի, ով տուողդ ամենայն բարեաց, փոխարինեա ինձ բառապատիկ, վեցպատիկ, իննպատիկ ու տասնպատիկ։ Վարձատրէ զիս այսպէս։ Տուր մաքրութիւն մարմնոյդ, հսկէ վրաս ամենամաշուրջ Հոմ, ընտիրդ քան զամենայն արարածս. իջիր վրաս զու ինքն, աղբիւրդ կենաց. բաց ինձի, ով ամենասուրբդ, հալածիչդ մահու, բաց ինձի երկնից բնակութիւնը, պայծառափայլ, լի փառք ու երջանկութեամբ։ »

Այս ըսելն ետքը՝ բաժակը չրթանցը մտեցուց և խմեց նուիրեալ հեղանիւթը, անուշահամ՝ քանի որ դեռ նոր քամուած է, բայց մահաւորի խմորուելէն ետքը խմողին։ Այս էր հրոյ պաշտօնն, այսպիսի էր ամոմի նուէրն Իրանի վաղեմի ժողովրդոց մէջ։

Ետիրաւուն շարունակեց նորէն իր աղօթքը, վերջնիւով ձեռքերը առ բաղինն։

— « Ինչպէս կը վառիս դու այս բոցոյս մէջ ու կը թագաւորես յերկինս, թագաւորէ նաև յերկրի, ով բազմազօրդ Ահուրամազդ, և տարածէ աստուածային իշխանութեանն Քառակենդաք Իրանի գագաթներէն մինչև Բննարոցոյ զայտափայլը, և մինչև հոն՝ ուր կը մրուրջնեն ծովու ալիքներն արեգակեան մտնելուն ատեն, Բարեբուն, չորից լեզուաց ժողովուրդն, խոնարհի բու օրինացդ, ով ոգիդ ճշմարտութեան։ Իրեն պաշտած աստղերն ինչ են քու լուսոյդ սոյգ անջն։ Միթէ երկնից գունտերն և բնութեան գաղտնի զօրութիւններն պիտի յախտակեն միշտ քու պաշտօնդ, ով ստեղծողդ ամենայնի, մահացուաց ու անմահից։ »

Այսպէս աղօթեց եռանդագին Յավանայ սրբազան լեզուաւ, այսպէս վերջ տուաւ աղօթիքը, և ոտք ելաւ որպէս զի լքնցնէ պաշտաման մնացած մասը։ Բայց զլուրթ թէթէ մը շարժելով, տեսաւ ետևի կողմը ուրջը ծիրաղբեալ մը քանի մը քայլ հեռաւորութեամբ, և ժմտեցաւ հաճութեամբ։ Այլ կեղծելով իբր թէ տեսած չլլալ գտնիկա, սկըսաւ խնամքով մարքել բաժակը ու թափել կրակին վրայ նուիրանաց մնացորդները, և ապու դարձաւ ու նոր եկողին ընդ առաջ գնաց սիրալիբ ընդունելութեամբ։

Պատանի մ'էր, արժանի մտազրութեան իր այլաձև կերպարանօրը։ Եարժանց ու ծիծաղոյ բնական շնորհքն, զիմացը վայելչութիւնն ու աչացը անիմանալի գծնէհայեցութիւնն կարծես կը կուռէին իրարու հետ օգտամնոյն արքայական դիմացը վերայ, և կը նմանազնէին զինքը կորեան, որուն գեղեցիկ ու անզօր կերպարանաց տակ կը տեսնուի հասունացեալ ամաց զօրութիւն ու անգթութիւն։ Կը ժմտէին կարմրեանք զիթնոքն լի ամբարտաւանութեամբ՝ զեռահաս տիոց գոռոց աղուամագից թէթէակի ստուերին տակ։ Աչքերը փայլուն ու անթարթափ էին՝ կայծակներ սթապոնով. քաղցր էր դէմքը, բայց այդ թխագոյն մորթոյն տակ կը վազէր Բուշայցեղին կենդանի ու բուն արիւնը։ Կը տեսնուէր վրան վայրագութիւն մը ոչ մարդ-

կային, և քաղցրութիւն ախորժելի, իրք՝ որ կրնան զհրաւ միանալ մարդկային բնութեան հետ: Բայց իր մատաղ տիօքը աւելի օրիորդի մը կը նմանէր, առ որ կ'օգնէր և սպիտակ ոսկեհամուկ պատմուճանն, մանուշակագոյն շրջադիւստն, վայելուչ ծամակայն՝ որուն ծոպերը մինչև ուսուցը վրայ կ'երկրնայային, և ականակուռ մանեակն՝ զարգ պարանոցին:

Ոտք ելաւ մէկէն պատանին, և յառաջնց աւազագունին ընդ առաջ:

— Հայր իմ, — ըսաւ ծնելով, միւսոյն գրիխաւորութիւնը ընդունելու ձևով, — Ահուրամազդ և գերագոյն աստուածք Բարելոնի քեզի հետ ըլլան:

Միւրը պատանոյն այս խօսքին վրայ կնճուեց գոճան:

— Բարելոնի աստուածքն ստորին են քան զԱհուրամազդ, ինչպէս զհոտն, ո՛վ Անուռա, — պատասխանեց միւսը հայրենի յանդամութեամբ: Ա.բ.բատի ցեղին պաշտած աստուածներն կը հնադանդին Ահուրամազդայ, ինչպէս նաև անմահացու վեց սուրբերն ու հոգեւոց անհամար դասքն, զորոնք ստեղծած է 'ի ծամանակի: Իրմէ կու գայ լոյսը, ինքը կը լուսանայ երկնից աստղերը և կու տայ տարբեր գօրութիւն. 'ի նմա միայն կը բնակի գերագոյն ճշմարտութիւնն, գեղեցկութիւնն ու զօրութիւնն. ինքն է սկիզբն և վախճան ամենայն եղելոց:

— Ստոյգ է, — ըսաւ պատանին հըռթեամբ:

Հաճեցաւ ծերունին պատանոյն այդ հըռթեանը՝ որուն վրայ արդէն չէր տարակուսեր, և մէկէն անուշ կերպ մ'առաւ ու ըսաւ.

— Արեմն, ո՛վ Անուռա, նուիրենք այս զեղեցիկ ծամերը օգտակար զբաղմանց: Սրբեալ առաւօրեան լուսցմամբ և աղօթիբով, կարգալի իտայէ՛ Վարդատի աւազին գլուխները, յորս բովանդակուած են Ահուրամազդայ օրէնքներն չար հոգեւոց դէմ: Կը տեսնաս որ երկնից զունդերն չարագիւռ ոգեւոց գօրութեան դէմ պատերազմելու համար ստեղծուած են, Սխալասանդք վեց ողբեր, բարբար իզէդքն ու Ֆէրուէրք՝ պահապանք մարդոյ կենաց պատերազմին մէջ:

— Իմաստունդ Չերտուչ, ... սկըսաւ խօսիլ պատանին գողալով:

— Ի՛նչ կ'ուզես:

— Արդեօք կարելի՛ է որ այս առաւօտ ազատ թողուիք զիս: Պատանի ընկերքս կը սպասեն ինձի ձիրարաւ մ'ընելու իմկուր Բեյէն դուրս: Պիտի երթանք մինչև Լահի-

րու գեղը, ուսկից կը տեսնուին Սիպուրայ բարձրագագաթն աշտարակները:

— Աւր քաղցր է հանդչել Գոմերայ արմաւենեաց տակ, — աւելցուց Չերտուչը հրգիծարանութեամբ. — Սյնպէս չէ՛:

— Ի՛նչ բան կ'ուզես ականարկի, — գօչեց Անուռա շիկնելով: Պիտի կենանք հօնքիչ մ'ատեն, որպէս զի յոգնութիւն առնուեր մենք և մեր ձիանքն:

— Չգուշացիր, Անուռա, զգուշացիր, — յաւել Չերտուչը, առանց միտ դնելու պատանոյն չքմեղանացը: Ահրիման հետամուտ է որսալու գրեզ: Չարանիթ սև ողբին կը ջանայ քօղարկել աչքերդ ակնապարար զուարճալեօք աշխարհի, որպէս զի խոտորեցնէ ուղիդ ճամբէն:

Պատանին զունատեցաւ մէկէն սրտին այլալուծեմէն, և ըսաւ դառնացեալ հօգուով.

— Բայց ըսէ ինձի, ո՛վ իմաստուն ուսուցիչ, ուղիղ ճամբան միշտ ցառոց ճամբայ պիտի ըլլայ:

— Այ, — պատասխանեց Չերտուչը, — կենաց վերջը ուրախայի է. բայց իմաստունն ճամբայ ընկնալէն առաջ կը սորվի նախ ճամբուն որպիսութիւնը: Երկու ճամբայ կայ որ կը տանին 'ի նպատակն. մին անձուկ է ու դժուարագնալի, զորիկ 'ի միտթարական ստուերաց, միւսն լայն ու զիրագնալի, հիանալի, ծաղկաղուարճ և լի անուշահատ բուրմամբք: Ա՛վ որ կ'ուզէ հասնիլ անխոռով դէմ եղեալ նպատակին, հետեի առաջնոյն: Կայ անոր որ կ'ընտրէ երկրորդը, վասն զի Ահրիման կը գորանի ոստոց մէջ որոպայթաղիր, և կը ներշնչէ խաբէպատիր խորհուրդներ. և ամեն ծաղկին որ կը ժողովնէր, ամեն քաղցր հանգրստեան զոր կը վայելնէր, կը սաշի կենաքերին սրազութեամբ ու կը մոռանանք մեր նպատակն: Մտիկ քրէ ինձի, որդեակ իմ, տեղիք մի տար չարախորհուրդ ոգոյն փողաբջանաց ճշմարտութեան լոյսը տեսնալէք ետքը. մի տար դրեզ կեշտութեանց՝ դու որ թագաւորական ցեղէ ես: Ի բաց թող այդ թուրութիւնն, ո՛վ որդիդ՝ Ներբովթայ: Ա՛ր է գիտաւորութեանց հաստատութիւնն, ո՛ր արիտութիւնն ու քաջութիւնն, որ արժանաւոր պիտի ընէին գրեզ մեծահոջակ նախորդացդ:

— Գժուարին առաքինութիւնք, — պատասխանեց Անուռա հուսալեւով, — և սակայն պիտի պարտաւորիմ՝ որ մը ճանչնալ զանոնք և իմանալ փորձով անոնց ծանրութիւնը: Բաբելոն ունի արժանաւոր թագաւոր մը, իմ մայրս. հաճին զերագոյն

դիբ... համի Ահուրամազդ պահել զինքը յերկայն առուրս, 'ի սէր և 'ի փառս իր ժողովրդեանը:

— Լսէ քեզի Բահման, պահապան ոգի Քաղաւորական իշխանութեան, — ըսաւ Չերտուչը կարծ 'ի կարծոյ. բայց պէտք է որ դու ալ պատրաստ ըլլաս գերադոյն կամաց հրամանին. մեծ յանցանք է թէ որ չըզիտնաս արժանապէս յարգել երկնից պարգևը: Ո՛վ Նինուաս, — ըսաւ յանկարծ ազդու ձայնով մը, ինչ բան կ'ուզես ծածկել ինձմէ. Ֆէրուէր՝ պահապան ոգին կը տեսնայ զքեզ, քեզի հետ է ամեն տեղ, կը կարգայ սիրտդ, ամին բան յայտնեց ինձի:

— Ի՛նչ կը խօսիս, — հարցուց Նինուաս, չհաւատալով ըսածին քան թէ վախճալով թէ յայտնուած ըլլան գաղտնիքները:

— Ամենայն ինչ յայտնի է ինձի, — կրկնեց նորէն Չերտուչը. — պատանի բարեկամներդ վառագաւոր ճամբու կ'առաջնորդեն քեզ, և ես բաւականապէս չզգուշացայ վրայ:

— Բայց վերջապէս... — ըսաւ պատանին նուազաձայն. — ինչ բանի համար կը յանդիմանես զիս: Չի՛մ յիշեր թէ սխալած ըլլամ յիմիք: Թէ որ անձանօթ թշնամիք հաւատացուցած են քեզի...

— Մի՛ ջանար արդարացնել զքեզ այդ կերպով, — ընդհատեց ծերունին: — Չերտուչը պէտք չունի որ այլք լրտեսեն զքեզ և ըրածներդ իմացնեն իրեն. ինքը ամեն բան գիտի, կը տեսնայ դամնայն, և կ'իմանայ սրտիդ ամենածածուկ գաղտնիքները: Ար տարակուսիս, Շատ լաւ, անյնինք 'ի փորձ. մտիկ ըրէ, պատմեմ Նինուասայ՝ Նինուասայ գաղտնիքները:

Պատանին գողալով ու խառված ընկաւ նստարանի մը վրայ: Չերտուչը սնոր առջին ոտքի վրայ կեցած, իաղաղ ու խիստ միանգամայն դատարորի նման, այսպէս սկըսաւ խօսիլ.

— Բագայադիսի՛ գոր Բաբելուցիք Սիվան ամիս կ'անուանեն, երրորդ օրուան առաւօտն էր, օր նուիրական աստուածայնոյն Արտիվեհէշտի ճշմարիտ լուսոյն հետեւողաց, ինչպէս նաև Ներգելայ արիւնարբու քրմաց. ուրեմն շատ ժամանակ անցած չէ վրան, նշանակեց Չերտուչը, — ուրովհետև Բագայադիս իր ընթացից կէսը հասած չէ տակաւին. և ահա թագաւորական պատանի մը, սիրելի Ահուրամազդայ, թէ է ոչ նպատակ անոր օրինակը, և ոչ ալ կը հաւատայ ամենակարողութեանը, բողմաթիւ հեծելակցաց հետ, ամենքն ալ իրեն հասակակիցք, և ընտիրք յընտիրս Բաբելու-

նի, ճիարջաւ մը կ'ընեն խմկուր Բելէն գուրայ մինչև Լահիրու գեղը, այն ճամբով որ կը հանէ յէփրատ: Կրք հօն կը հասնին, կանկ կ'առնուն սոճույ անտառակի մը հովանոցն ներքև, որ անզգայի կերպով կը խոնարհէր մինչև ղեստաբը: Արքը՝ հասած էր հրկնից միջակէտը, և իր հրեղէն ճառագայթից նետները զաշտավայրին վրայ արձակելով՝ կը յորդորէր խոնջ պատանինրը ժամ մը հանգիստ առնուլ ճառոց ստուերին տակ: Բայց ասոնցմէ մէկը զատուելով իր ընկերներէն, կը յառաջէ գէպ 'ի գետափը, զով ջրով կազդուրելու մարմինը: Եւ երբ սփռնէր կեցածը կը դիտէր արձանափառը ջրոյն ընդարձակ մակերևոյթը՝ որ սրբութաց կը սահէր դէպ իր սիրելի քաղքին կողմերը, տեսաւ յանկարծ որ գետոյն միւս փոխուհէն լուզալով մէկը դէպ իրեն կու գար:

— Հայր իմ... գոչեց Նինուաս սրտաթունդ:

— Այո՛, — շարունակեց Չերտուչը, — առանց միտ զնկուլ անոր ընդհատելուն, — կը յառաջէր նա լուզալով Գոմբայ արմաւենիներէն, որոց նուրբ կողմերն ու կանաչազարդ թեքեալ ստերն կը տեսնուէին Էփրատայ ձախակողմեան փոխուքէն: Չախ ձեռքին մէջ հողէ աման մ'ուներ ջուրէն գուրս բռնած, և աջովը կը յառաջէր դէպ 'ի գետափը՝ ճեղքելով զՆիբրատ, որուն ափանց վրայ անշարժ կեցեր էր պատանին գիտելով այդ տեսարանը:

— Ար հասնի նա 'ի գետափին, և կը մատուցանէ պատանոյն հողէ անօթը լի կաթամբ, զոր ոլոռն ոլոռն խմելէն ետքը, կը հարցնէ ժմտելով.

— « Ի՛նչ է անունդ:

— « Անահիդ, — կը պատասխանէ միւսը:

— « Անուն դիցուհւոյ, — կ'ըսէ պատանին: — Իրազընէ առաջին տեսութեամբ Գառկինա կարծեցի զքեզ, կին Աջի, 'ի վեր ելեալ ծովու ալիքներէն:

— « Իսկ դու, ո՞վ տէր իմ, ինչպէս կը կոչուես:

— « Նինուաս:

— « Դու Նինուաս, — գոչեց օրիորդն, — դու իբրևս Բաբիլու. ո՞հ ինչպէս բարեբախտ եմ: Եւ սրտին ուրախութենէն ու ժաթափ կարծես զետին պիտի ընկնար. բայց Նինուաս բռնեց զինքը, և նստան գետոյն եզերքը զալարութեան վրայ...:

— Ահաւասիկ առափն պատահումը. և ոչ այսչափ միայն: Գեռ ուրիւ անգամ մ'այ անչառնա զէփրատ լուզալով, բերելով իր գաւառը կաթին ամանը առ ծարա-

ևաճիւծ պատանին, Բայց երրորդ անգամսն աւելի եւս յանդգնելով, փոխանակ լաւհիւրու երթալու, հեռացաւ իր պատանի ընկերներէն և արշաւեց մինչև ցարմաւեհն Գոմերայ: Կ'ուզես լսել թէ ինչ խօսուեցաւ երէկ, օրուան հինգերորդ ժամուն, կանաչութեան այդ հովանւոյն տակ, հեռու օտար աչքերէ: Մտիկ ըրէ, և կ'իմանաս որ բան մը վրիպած չէ պահապան ձուռոյն սրալուր ականջէն:

— « Թէ որ կը սիրես զիս այսչափ, — կ'ըսէր օրիորդն, — մի մտանար զիս օր մը, ո՛վ իշխանդ:

— « Իշխան, — կրկնեց պատանին դժկամակելով: Ամենայն որ զիս սցալէս կը կոչէ, բայց անհաճոյ է ինծի այդ անունը: Դու Նինուաս կոչէ զիս, եղբայր ու բարեկամ: Մոռնանք արքունիքը, չկայ հօն մէկը որ սիրէ զիս:

— « Եւ ո՛չ իսկ մայրդ, — հարցուց Անահիդ: »

— « Մայրս: Ես կը սիրեմ զինքը, և կարծեմ թէ ինքն ալ զիս կը սիրէ. բայց թագաւորութեան մեծամեծ հոգոց զբաղեալ, միշտ հեռու է ինծմէ: Կը սիրէ զիս Չերտուչդ՝ Վարաց իմաստուն իշխանը, զոր թագուհին ուսուցիչ ու խնամատար կարգած է ինծի: Կը սիրէ զիս, — կրկնեց նորէն պատանին հասաչելով, — գէթ այնպէս կ'ըսէ, և շատ անգամ կ'ըսէ. բայց երբէք տեսած չեմ այդ մարդուն ծիծաղը, ծիծաղը՝ որ յայտարար նշան է սրտի զգածման: Չերտուչդ միշտ ծանր կերպ ու՛ռնի, լուռ ու խորհրդաւոր է. ահաւոր է իր աստուծոյն նման, պատեալ անտեսանելի ոգիներէ՝ որ կը խռովեն գիւերային հանդիստս զարհուրելի երազովք: Մխիթարուած եմ քեզի հետ, ո՛վ Անահիդ. կը փարատես վրաս թանձրացած խաւարը, և կը հանդարտես սրտիս խռովութիւնը. դու ես իմ հաւատքս, յոյսս ու սէրս. ահաւասիկ կենաց երեք մխիթարութիւնքն:

— Այսպէս կը խօսէր նա, և միւսը մտիկ կ'ընէր հանդարտութեամբ, ճնմելով միատեղ Գոմերայ արմաւենեաց տակ: Նինուաս առաջին անգամ տեսաւ հօն օրիորդին բնակարանը, գծուծ տաղաւար ձկնորսի, ուր կ'ապրէր նա անծանօթ, Բայց երկար պիտի չի տևեր իր այդ վիճակը, թէ որ Նինուաս կարենար արգիւնաւորել իր մտաց խորհուրդները. և գուցէ արժանաւոր պիտի դասէր բարձրացնելու զնա ՚ի գաճ դշխոյութեան: Ըմարիտ չէ՛ Նինուաս, միթէ այս չէ՛ մտածութիւնդ: »

Չերտուչդ այս կերպով մի առ մի պարզեց պատանւոյն գաղտնի խորհուրդները,

Նինուաս ՚ի սկզբան զարմացու, ապա վախով ու լռութեամբ մտիկ ըրաւ:

— Հայր իմ, — աղաղակեց նա վերջապէս տրտմութեամբ, — Չերտուչդի սարք ընկնալ ուզելով:

Չերտուչդ վեր առաւ զինքը առանց բան մ'ըսելու:

— Չես խօսիր, չես ներեր ինծի, բաւ պատանին ազաչակերպ: — Թէ որ մինչև հիմա չճանցայ զքեզ, հասալիս անփորձութեանը ընծայէ զայն: Այո՛ կը տեսնամ, կ'իմանամ որ դու աստուծոյ պաշտօնեայ ես, զիտես ամեն բան, կը կարգաս սրտից ծածուկը, ամենատես ես:

— Ոչ ես, — աւելցուց Չերտուչդ խոնարհութեամբ, — այլ Ամասպանդք, Իզէդք ու Ֆէրուէրք, ոգիք անտեսանելիք որ կը վախցնեն զքեզ, Սակայն իմաստունն չի վախեր անոնցմէ. ո՛վ որ Վաղաչի օրինացը կը հետեի՝ անոնցմէ վախնալու պատճառ մը չունի: Ո՛վ Նինուաս, միթէ քու շրթունքներն էին որ այնպէս չարաչար գիտեցին զիս, ի՛նչ չեմ սիրեր զքեզ. շուտաւ երբէք Չերտուչդի ծիծաղիլը: Ի՛նչ միթէ ընդունայն յոյսերով խաբելու էի զքեզ, ես՝ որ նուիրած եմ կենանք ստտուածութեան գաղտնեաց, ես՝ որ ՚ի սրբավայրս կ'անգնեմ իմ գիւերներս, ես՝ որ կը դաստիարակեմ զքեզ ճշմարտութեան գեղեցիկ սկզբունքներով:

— Հայր իմ, — աղաղակեց Նինուաս լալով, — Յանցաւոր եմ, ինչ պատիժ պիտի տաս ինծի:

— Պատիժդ աղօթքն ըլլայ. աղօթէ միշտ Մազդայի՛ նռանդուն հոգւով: Ըմարիտ իմաստութեան հասնելու համար՝ դեռ երկայն ճամբայ ունիս քայելիք. բայց հաւատքն ու աղօթքն կրնան համառօտել զայն: Այն տունն միայն անվտանգ ու առանց թունաւորուելու կրնաս մօտեցնել շրթունքդ աշխարհիս վայելից բաժակին:

— Ուսուցիչդ իմ, — ըսաւ այն ատեն պատանին թաղարկուելով, — Թէ որ ըսելու ըլլամ թէ՛ ունիմ այդ հաւատքը... Թէ որ երգնում որ...

— Գնա, — ընդհատեց Չերտուչդ, ծրար տելով առաջին անգամ իր աչակերտին: — Անգամայազ ոչ զդ կը բռնադատէ: Գնա պատանի բարեկամացը քով, բայց մտածէ...

— Կը թագաւորէ նա երկինքը, — շարունակեց պատանին ուրախութեամբ, — և դու ալ անոր պաշտօնեայն երկրիս վրայ: Չինքը կը պաշտեմ, զքեզ ալ կը սիրեմ: Այսպէս ըսելով՝ կ'ուզէր Նինուաս ծընրադրել անոր առջև: Չերտուչդ վեր առաւ

դիւրը գորովանօք Ա սովնց կուրծքին վրայ,  
Պատանին ուրախ սրտով հետաքսաւ ան-  
կէց. բայց Չերտուչդ իրմէ աւելի դժուար-  
խոցած՝ մնաց հօն առանձին:

— Ենորհակալ եմ, — գողցոց ուրախու-  
թեամբ, ձեռքերն ու աչքիւր երկինք վեր-  
ցնելով, — շնորհակալ եմ քեզի, Աշուրա-  
մազդ, լոյս սրտից, տէր ազգաց Յովանայ:  
Գուես որ յաղթեցիր այսօր. Նիքրովիայ  
արևնակից այգ կորեան պարտութիւնն,  
գեղեցիկ նախագուշակութիւն մ'է ինձի:

Ապա հանդարտաբայ կը ճնմէր հովանու-  
ցին վրայ նման այն մարդուն որ կատա-  
րեալ տէր է իր անձին ու պարագայից, և  
կը գիտէր քաղաքը ու բարձրագուշակն  
չէնքերը, պայծառացեալք արևուն ճառա-  
գայթնիւրէն:

— Բիցիդա, Նիքրուտ, — յաւել ապա  
ուղղելով աչքերը եօթնազունդ աշտարա-  
կին ու երկրի հիմանց նուիրական բրգան  
վրայ, — ձեր աստուածները պիտի ընկ-  
նան օր մը, և Մազապի ամենաջինջ բոցն  
պիտի բորբոքի ձեր գազաթանց վրայ: Եւ  
զու գոռոզդ դշխոյ, արհամարհէ գիս: Պի-  
տի հասնի ժամանակն, և Տայգետայ առաւ-  
պեկեալ ծնունդքն պիտի չկարենան փր-  
կել զքեզ:

Եւ երբ կը խօսէր այսպէս, մարդ մ'ե-  
րևցաւ հովանոցին վրայ:

— Տէր ի Բ... — ըսաւ եկողն:  
— Ի՛նչ կ'ուզես, Թուրաւար:  
— Հայոց թագաւորը շարժեցաւ իր հե-  
ծելագորուն հետ Նիվիդգի Բելայ պատուա-  
րէն: Ժամէ մը կը հասնի կամրջին գլուխը,  
արբունիքը գտւու համար:

— Բարով գայ, — պատասխանեց Չեր-  
տուչդ: — Գնա ու պատրաստ եղիր հրա-  
մանաց: Ես ալ քիչ ատենէն կ'իջնամ Նե-  
րեայ մեծ սրահը սպասելու թագուհւոյն:  
— Թուրաւար ծռեցաւ և փութաց այն  
սանդղէն վար ուսկից ելեր էր:

— Բարով գայ, այո՛, — շարունակեց  
Չերտուչդ: Դասն է կրածս, բայց դառն  
պիտի ըլլայ վրէժն ալ: Ա՛յ, կամօք ընտ-  
րեցիր գայն, Եամիրան: Թող կատարուի:  
Միլիդա Չարբանիդ տուաւ քեզի այգ  
քաղցր թոյնը, զոր պիտի չկարենայ դար-  
մանել:

ԳԼՈՒԽ Ե.

Շամիրամայ արբունիքը.

Ըստ որում ժիրածիրն Թուրաւար խն-  
ցուցեր էր Չերտուչդի, Տայկական հեծե-  
լագօրն Նիվիդգի Բելայ պատուարէն ներս

մտնալով, բաւականապէս յառաջացեր էր  
քաղքին արևմտեան թաղերուն միջէն, մօ-  
տենալով կամուրջին որ կը միտաներ իրա-  
րու հետ քաղքին երկու մասերը:

Գլխըրային հանգստեամբ զօրացած, եր-  
կայն ճամբուն քրտինքէն ու փոշիէն մա-  
քրուած, և շքեղադոյն զգեստներով զար-  
դորուած, Հայոց թագաւորին հիծելազօրը  
սիւզանձմ'իր յառաջէր ժողովրդեան միջէն,  
որ խոնքեր էր ճամբուն երկու կողմերը: Այ-  
մենքը հիացմամբ կը դիտէին իսխընջող երկ-  
վարաց արձակ բաշերը, հեծելոց երկայն  
սուրբը մէջքերնէն կատարած, փայլուն  
կապարճները, երկայն աղեղունքը յալմէ  
ուսոց, և ցցունազարդ սաղաւարտները, ու-  
րոնք պատերազմական երևոյթ մը կու տա-  
րին Բլոնունեաց ու Արմուրայ ազգաց, բո-  
լորովին հակառակ Բաբելացւոց մեղկ բա-  
րուցը:

Բայց բազմութեան աչքը մասնաւորա-  
պէս պատանի թագաւորին դարձած էր:  
Սովորութիւն էր որ թագաւորը կառքով  
կ'երթային, կառավարն ոտքի վրայ կենցած  
առջևէն, և հովանոցակիրն ետևէն: Այլ  
ասոր հակառակ պատանին Արա սովորա-  
կան հեծելոց նման ձիու վրայ նստած էր,  
զիմանց գեղեցկութեամբն միայն նստովոր:  
Ջլպպիդդ ու նուրը սրունքները ծիրանա-  
գոյն գուրպաներով պատած էր. մարմնոյն  
վրայէն պատմուճան մը հաղած էր սպի-  
տակ կտաւէ՛ ոսկեմամուկ վ'ըլլաւորք: Ի՛  
ծիրանույ էր նոյնպէս արքայական զլա-  
միդն ալ, որ կ'իջնար ուսերէն ծալ ի ծալ.  
և գեղձանամաղ գլուխն պսակեալ էր մար-  
գարտայեռ վարսակալով մը, ժառանգու-  
թիւն իր նախորդացը: Հաշած էր ոտքիդը  
փափկամորթ սանդալ մը, որոնք կը հանդ-  
չէին ոսկեծոյլ ասպանդակաց վրայ. կը  
բռնէր ձեռացը մէջ ականակուռ սանձը,  
փայլելով իր սպիտակեանք ձիուն պարա-  
նոցին վրայ, որուն վրայ իրու և տապանակ  
սփռուած էր ընձառիւծոյ մարթն:

— « Արա Գեղեցիկ, Արա Գեղեցիկ, —  
կը գողէր Բաբելոնի ժողովուրդն, ինչպէս  
առաջին օրը աղաղակեր էին արուարձաւ  
նեայք՝ տեսնալով պատանոցն անցնիլը,  
իրացքնէ իրմէ աւելի գեղեցիկ երիտա-  
սարդ մը տեսնուած չէր ի Սենաար: Ինչ-  
պէս մեր թագուհին շնաշխարհիկ գեղեց-  
կութեամբ կը փայլէ կանանց մէջ, նոյնպէս  
այգ ազնուական հիւրն մարդկանց մէջ:  
Արա Գեղեցիկ, բարով հասար չորից լե-  
զուաց ժողովրդեան քաղաքը »: Այսպէս  
բողոր ճամբուն երկայնութեամբ ուսկից  
կ'անցներ Հայոց թագաւորը, զարմանաց  
հծծիւնն կը փոխուէր ի բացազանչութիւն,

յոզողակ ցնծութեան, յողջնի սիրալիր-  
ինչպէս ակնածող ժողովուրդ մ'առ թա-  
գաւորն իւր, քան թէ բարեբախտ ու գո-  
ռող ազգ մ'առ հարկատուն: Եւ ամենիւ ի-  
րարու գարնոյ ելով ու գիրար մեղեդով կ'ու-  
ղէին իրեն մօտենայ, և ձիուն առջև խոննե-  
լով՝ կը խափանէին ճամբան, թէպէտ և  
բարեկացի զօրաց զուճարտակ մ'առջևէն  
կ'երթար, ճամբայ բանալու թագաւորա-  
կան այցելուաց:

Բայց սրտմութիւնն պատեց գարձնայ  
Արայի սիրտը: Կ'իմանար թէ կը մօտենար  
Շամիրամայ, և թէ քանի մը վայրկենէն՝  
Ասորեստանի մեծի թագուհւոյն առջևը  
պիտի ելլար, աէր աշխարհիս մեծաւարած  
Երթանկառութեան մը: Սանտիի յիշատակը,  
իր թշուառ բարեկամին պատկերը՝ միևնույժ  
Եփրատայ ջրոց վրայ, շարունակ կենդանի  
էր մտացը առջև: Բայց այդ անտեղիտալի  
տխուր խորհուրդները մտքէն փարատելու  
համար, կը մտածէր Միխիզդայ նուիրական  
անտառին մէջ անցուցած գիշերը: Կը մտա-  
ծէր մեղէնին մէջ տեսած անձանօթ մեծու-  
հին, և անոր հետ ըրած խօսակցութիւն-  
ները: Եւ միթէ նա երգմամբ չվկայեց թէ  
Շամիրամ անպարտ է Սանտիի մահուանը:  
Եւ միթէ կրնար ստել: Անտառայտայ ոչ-  
ուստի հաւատաց անոր խօսքերուն: Բայց  
այսու հանդերձ կրնար սիրել զՇամիրամ,  
զոր այնչափ կ'ատէր մինչև նոյն ատեն:  
Կրնար գոհութեամբ սրտի ներկայանալ  
թագուհւոյն նա՝ որ գիտէր թէ Հայկայ ա-  
րեանկից է, և կու գար իրրև հարկատու:

Անձանօթ տիկինն շնչեր էր սկանջէն  
թէ իր անունը Աթոսա է. բայց աւելի տե-  
ղեկութիւն մը տուած չէր վրան, միայն  
սայտափն դուռակի տուեր էր թէ նա Բա-  
բելոնի զլլաւոր մեծուհեաց մէկն ըլլայ:  
Ուստի կը յուսար և հաւանաբար կը կար-  
ծէր պատանին թէ պիտի տեսնայ զանկիս  
թագուհւոյն ազնուազարմ ընկերակցաց  
մէջ. բայց զառն տարակոյս մը կը ճմլէր  
սիրտը ու կը խեղդէր այդ սորախալի ակըն-  
կալութիւնը: Կը մտածէր թէ անուշառ նա-  
խանձորդն Շամիրամ կը հայածէ այդպիսի  
գեղեցիկութիւն մը ու չընդունիր իր արքու-  
նեաց մէջ: Եւ սակայն երբ պիտի հրու-  
ծարէին իրարմէ առաւօտեան արշալու-  
սոյն, չըսու տիկինն պատանւոյն թէ ամե-  
նեկն շտարակուսի ու չվախնայ. նորէն շու-  
տով կը տեսնուին իրարու հետ, և թէ  
ինքն ընդ առաջ կ'ելլայ իրեն: Այսպէս կը  
յառաջէր Արա յուտով ու երկիւղիւ, պա-  
տասխանելով միանգամայն ժողովրդեան  
ողջունատուութեանց ու ծափահարու-  
թեանց:

Քիչ ատենէն հասաւ Քեծեկազոր կամըր-  
ջին գլուխը, հրաշալիք բարեկական ճար-  
տարութեան, որ կը կցէր իրարու հետ Ե-  
փրատայ երկու ասիուները և արթունի կըր-  
կին ապարանքը, դէմ առ դէմ իրարու,  
երկուքն այ զարմանակիրոք: Առաջինը որ  
աջակողման ասիան վրայ կ'ընկնար, երի-  
սուն վտուան շրջապատ ունէր, բարձրա-  
կառոյց ատամնաձև որմով պարսպեալ, ո-  
րուն վրայ քանդակուած էին պատերազմո-  
ւոց ու պաշարեալ քաղաքաց պատկերնե-  
րը, և երկայն շարք մ'աղաչաւոր գերեաց,  
կամիջին միւս կողմը կը կանգնէր երկրորդ  
ապարանքն աշտարակաձև, վաթսուն վը-  
տուան տարածութեամբ գետնոյ վրայ,  
առ որ կը տանէին կողմնակի լայնորձակ  
վերևը, որոց երկու կողմերը կը հսկէին  
վիթխարի անդրիք: Երկրորդ պատուարը  
քառասուն վտուան շրջապատ ունէր, և  
ամեն տեսակ կենդանիներով զարգարուած  
էր, այնպէս արուեստագործք՝ որ ողջ կը  
կարծուէին: Երրորդ պատուարն մէջ որ  
զգեակն էր, կը տեսնուէին բարձրաբան-  
դակ ու հրաշակերտ պատկերներ, որոց  
մէջ որսորդութիւն մը կար, յարուսմ դէմ-  
քին չորս կանգուն բարձր քանդա-  
կուած էին: Նիստուած էր հօս Շամիրամ  
կրակ ու բոց նծոյզի մը վրայ, ձևաքի տէգը  
յովազի մը վրայ արձակելու դրից մէջ:  
Իրմէ թիչ հեռու կը տեսնուէր Նիսոս իր ա-  
մուսներ, որ նիղակի մէկ հարուածով կը  
վիրտորէր առիւծ մը:

Հիւնտալի էին այս ամեն բաներն: Ահա-  
զին մակախիւրդ, սպառուածքներ ու ա-  
տամնաձև շինուածքներ արմաւ է անհամար  
բունոց վրայ. հօս հօս դրուած մարդակերպ  
ահագնատեսիլ թեւաւոր առիւծներ ու ցու-  
լեր, որոնք կը հսկէին դրանց. բազմանկար  
երկայն ձողեր, որոց վրայէն կը ծածանէին  
դրօշներ. վիմակառոյց սանդուղներ ու  
պատշգամներ, և ուրիշ անհամար տեսակ  
բաներ, որոնք կը շփոթէին գիտողին աչքե-  
րը: Իսկ բարձրագոյն հովանոցաց վրայ կը  
տեսնուէին վրաններ ու հովանիներ, որոց  
տակ կը պատապարտէին արեւու ատեն, և  
կանաչազարդ ծառոց մէջ կախաղանաւոր  
բուրաստաններ, երեւակայութիւն կանայի  
և ասործակ թագուհւոյ:

Երբ բազմութիւնը միւս գետափը հա-  
սաւ, բաբելական զօրաց գունդն կանկ ա-  
ռաւ, և երկու թև բաժնուելով՝ ճամբայ  
բացաւ Հայոց: Պատանի թագաւորն ան-  
ցաւ միջերնէն ու գնաց դէպ 'ի արքունեաց  
դուռը, որուն երկու կողմերը կը հսկէին  
իրարու դիմաց երկու վիթխարի առիւծ-  
ներ՝ հանգչելու դրից մէջ:

Ընդունելու համար զինքը կը սպասէին հօնարքունեաց մեծամեծներն, հազարապետն, տակառապետն, ներքինապետն, արքունի զորաց հրամանատարն, և սպաւաւորաց ու ծառայից բազմաթիւ գումարտակ մը: Առաջինն ծիրանագոյն երկայն պատմուճան մը հազած էին, ոսկեզարդ վերջաւորօք, և մէջքերնէն սուրբեր կախած՝ իւրաքանչիւրն իր աստիճանին համամաս պատուանշաններով: Զինուորակաց սաղաւարտած և տեսակ մը գլխանոց ունէին գլուխին, որ ծածկելով այտերնին կ'իջնար մինչև կզակնուն վրայ:

Հազարապետը Հայոց թագաւորին ընդ առաջ երթալով, այսպէս խօսեցաւ, ձեռքերը վեր վերուցած.

— Բարով հասար, ո՛վ թագաւորդ Հայոց, Շամիրամայ մեր գերապանծ թագուհւոյն արքունիքը, որուն շնորհից Բէլ յաղթութիւն սրոյ և իշխանութիւն երկրիս բռնանց վրայ: Ինչպէս որ Սանի կը թագաւորէ երկիրքը ու կը սփռէ ամեն կողմ' իր լուսոյն բարեբաշխ ճառագայթները, նոյնպէս և նա կը թագաւորէ 'ի Բաբելոն ու կը սփռէ իր բարեկամութեան բարիքը մերձակայ ազգաց թագաւորաց վրայ:

Հայոց թագաւորը ծոռեցաւ մեզմով առանց բան մ'ըսելու: Ներքինիք, յառաջելով բռնեցին պատկառանքօք ձրուն սանձերէն, առաջնորդելու առաջին պարունակը ու վերելքը որ կը տանէր 'ի վերին յարկն: Այսպէս պատահին. Արա ընկերակցութեամբ բաբելոնցի սպայից' կը յառաջէր, և առաջին ուղեգարծին կրցաւ տեսնալ իւրայնոց երկայն շարքը, և Բաբելոնի ժողովուրդը՝ որ խոնձ էր կամրջին ու գետոյն ախաղէ վրայ:

Այդ գեղեցիկ տեսարանին ուրիշ մ'ալ յաջորդեց՝ երբ երկրորդ պարունակը հասան, որ ընդարձակ հրապարակ մ'էր հոյակապ շէնքերով շրջապատած, ուր կը բռնակէին մեծամեծ արքունեաց: Շարունած էին գեղեցիկ կարգով թագունհուոյն թիկնապահները, հրաշատեսիլք իրենց բոցաճաճանչ սրահները, կլորած և վահանովը ու պղընձաճոյլ սաղաւարտովը: Երբ երկցաւ Հայոց թագաւորն, հնչեցին փողերն, զարնուեցան թմբուկներն, և Ալեքսանդրի պատերազմական երգոց արձագանգն բարձրացաւ մինչև ցերկիսն:

Հեծելագորն յառաջեց մինչև երկրորդ մուտքը, մարդակնրկ երկու վիթխարի ցուլերէ պաշտպաննալ, Գագրեցան մէկէն երգերն, և երկցան սեմոց վրայ Բաբելոնի պահապան գերագոյն Իից քուրմերն: Սամիլ արեգակն աստուծոյ քուրմերն ոսկե-

թել հազած էին, Սինիի՛ լուսին աստուծոյ պաշտօնեայքն՝ արծաթի, Նինիպի քուրմերն՝ սևագոյն, Մերովագրինը՝ նարնջագոյն, ծիրանեգոյն՝ Ներգելայն, սպիտակագոյն՝ Միլիդոայն, և կապտագոյն՝ Նեբայն: Մեծազին աղուերներով զարդարուած էր զգեստներն ու թագերնին, որոց ծայրերէն կախուած էին զմուխտներ:

— Աստուածք պաշտպանն գբեզ, ո՛վ թագաւորդ Հայոց, — ըսաւ քրմապետն, վերցնելով ձեռքերը յօրհնութիւն: — Արքունեաց բարեբաստ երջանկութիւնն օրինակ ըլլայ բեղի որ աստուածոց պաշտպանութեամբ միայն կ'երջանկանայ մարդկութիւնն: Երկնից օգնելովն միայն կը ժառանգեն թագաւորք փառն, կը բաշեն արդարութեան ճամբան, կը հաստատուին 'ի սրբութեան, և յետ մահու արժանի կ'ըլլան երկնային փառաց:

Արա ծոռեցաւ հառանելով և պատասխանեց.

— Ճամարիտ են ըսածներդ, ո՛վ ամենասուրբք: Թագաւոր մը որ կրկնից օգնակալութիւնն չունի իրեն. հաստատութիւն, կուրօրէն կը թափառի մթութեան մէջ: Կապուտակ հաստատութեան բնակիչքն, թէ և զանազանապէս կը կոչուին 'ի ձեզ և 'ի մեզ, հսկեն միշտ չորից լեզուաց ժողովրդեան վրայ:

Այսպէս խօսելէն ետքը, մղեց ձին դէպ 'ի սեման, և ընկերութեամբ ուղեկցացն ու բաբելոնական ամբոխին՝ մտաւ երրորդ պարունակը, ուսկից կ'ելլըցուէր արթունեաց վերջին յարկը, ուր էր մեծի թագուհւոյն բնակարանը:

Հօս շատ աւելի զարմանալի ու գեղեցիկ տեսարան մը բացուեցաւ տոջին: Կը տարածուէր աչացը առջև արձակավայր մը, որոյ երկայնքն հինգ վտուան էր, և լայնքն այնչափ՝ որ տասն երկվարք կրնային շարժիլ մէջը դէմ ընդդէմ, առանց հաշուելու քովընտի քարայտակ հետի ճամբաները, որոց մին կ'երկայնէր եգերաց քովէն զարդարեալ համաշափ հեռաւորութեամբ խորհրդական դէմքերով, և միւսն կը շքրջապատէր՝ իբրև սպիտակ կտաւէ երիզ մը, պալատան սիւնազարդ անդաստակն, ձեռնացեալ արմաւենեաց սիւներէ, կամսիդէ խոյակներով 'ի ձե եղջերուաբաղի, յուշկապարհի և ուրիշ մտացածին կենդանեաց: Արձակավայրը դատարկ էր, սպասելով այցելուացն, որ պիտի շարուէին հօն գեղեցիկ կարգով: Բայց սեւեց անջրպետաց մէջ զիգուած էր բազմախուռն ամբոխ մը, և առջևով կեցած էին երեքհարիւր դաւաղանակիրքն, պաշտօնեայք թագաւոր-

բակաս կամաց, գեղեցկատեսիլք իրենց  
 երկայն ծիրանագոյն և սսկեթել պատմու-  
 ճանաւ ու ճոխ վարակալուլ, որով կը գրա-  
 պէին փայլուն ու զանգուր մագիւրնին: Իսկ  
 սիւնագարդ անդաստակին վրայ կը տես-  
 նուէր հովանոց մը, շրջապատեալ նկարա-  
 կերտ վանդակով, որուն մէջ տեղը կը  
 բարձրաբար բազմազունեան հովանի մը,  
 որուն տակ շուրջ առեալ 'ի նստչտաց կը  
 նստէր թագուհին, սպասելով Հայաստանի  
 հարկատուին:

Հազարապետը որ առջևէն կ'երթար Ա-  
 րայի ձիուն սանձէն բռնած, իմացուց թէ  
 մօտ է թագուհին: Այն ատեն կանկ առաւ  
 պատանին արձակակայրին մէջ տեղը, բար-  
 ձրացուց աչքերը դէպ 'ի հովանին, և ձեռ-  
 քը կուրճքին վրայ դրաւ 'ի նշան յարգա-  
 նաց: Այլա հանեց զխէն մարգարտայեռ  
 վարակալը, և պատկանէն տկանակապ  
 սուրը, և իր իշխանութեան այդ նշանները  
 յանձնեց հազարապետին, որ ստաւ մէ-  
 վէն ու վերցրց առ թագուհին, և նա ժպ-  
 տեցաւ ու գաւազանով նշան տուաւ թէ կը  
 հաճի այդ հպատակութեան:

Այս նշանին հնչեցին գարձնալ փողերն,  
 և զարնուեցան թմբուկներն: Հայոց թա-  
 գաւորն իջաւ ձիէն դէպ 'ի դուռը երթա-  
 լու, և հնձնլագորն ու կարասիկրք շարուե-  
 ցան հօն թագուհւոյն աչաց սահմէ:

Կարասիկրք կը կրէին Արայի պարգե-  
 ները առ մեծ թագուհին Բարեղոնի: պղըն-  
 ձոյ ընկան գանձուածնք: Հայոց լուսնե-  
 րէն հանուած, զոճազով կտորուանք: Այս  
 պատականէ, վանայ լճին տրեւելակղզի-  
 գունապաճոյճ ընտիր գորգեր, գորոնք հիւ-  
 սեր էին Բզնունեաց կանայք ձմեռուան եր-  
 կայն գիշերները, և փորրամարմին բայց ու-  
 ժով ու քաջընթաց ձիեր, սննալք Արմաւ-  
 րայ թագաւորական ասպատանաց մէջ: Էւ  
 երբ գանձապետն սչքէ կ'անցընէր այդ հա-  
 րուատ ընծաները, և ներքինիք եղեգէ սրա-  
 ժայր գրչով կը նշանակէին պապիրէ մատե-  
 նոց վրայ սանն ընդունածնին, արքունեաց  
 ձեռաններն կ'առաջնորդէին Հայոց թագա-  
 ւորին սպասաւորաց սակմանուած խուցե-  
 րը, որպէս զի հանդիսն քանի մը ժամ, քաղ-  
 քին պարսպէն դուրս իրենց ընկարաննե-  
 րը գառնալնէն առաջ:

Հազարապետին առաջնորդութեամբ և  
 քրմաց ու գաւազանակրաց ընկերակցու-  
 թեամբ, Արա անդաստակը մտաւ, ուր մա-  
 տուցին իրեն սխորժահամ ըմպելիներ, և  
 սպիտակաղգեստ պատանիք հեղին սափո-  
 րով ձեռացը վրայ անուղիտ շուր: Ա-  
 պա ներքինեաց ակնարկութեամբ՝ մտաւ  
 Նիբրովթայ սրահը, առ որ կ'ելլացուէր

ընդարձակ սանդղով մը երկու կարգ միթ-  
 խարի ջրուց միջէն, նշանք աստուածայն  
 զօրութեան, որոց լայնարաց թեւերն կապ-  
 տագոյն էին, եղջիւրքն ու եղունգն սսկե-  
 զօճք, մարդակերպ դէմքերնին մարմնոց  
 գոյն ունէր, և ապակեայ սչքերնին նման  
 կենդանի մարդոց:

Սրահն՝ որ Նիբրովթայ անուամբ կը կո-  
 շուէր, վասն զի նոյն թագաւորին գործերը  
 պատմուած էին հօն սեպածե տառերով, և  
 բացատրուած բարձրաբանդակ նկարուք  
 որմոց երկայնութեամբ, անձայր մեծու-  
 թիւն մ'ունէր: Որմունքն աստ անդ ամրա-  
 ցած էին սիւնաձև կամարակալներով, ո-  
 րոնք ութսուն բազկաչափ և աւելի բար-  
 ձրութիւն ունէին խարսխէն մինչև ցխոյակ-  
 սրն, ուսկից կը սկըսէր ձեղունն, անուշա-  
 հատ նոճնոց փայտով շինուած և ճոխա-  
 պէս սսկեզօճած, որուն մէջտեղէն անցք  
 մը բացուած էր արեգական լուսոյն, որ  
 կ'իջնայր անցնելով ձիւրանագոյն հովանոց  
 մը միջէն:

Մեանց մէջ կային ընդարձակ քառակու-  
 սի տեղուանք, իւրաքանչիւրն երկու մաս  
 բաժնուած հորիզոնաբար: վերին մասանց  
 մէջ որ զարդարուած էին փայլուն աղիւս-  
 ներով, գերագոյն աստուածութեանց դէմ-  
 քերը կային, որ շրջանակ մ'էր ու մէջը  
 թեւաւոր մարդու մը դէմք, բռնելով ձախ  
 ձեւերին մէջ գաւազան մը, և աջը վեր  
 բարձրացուցած 'ի ձև ուսուցանելոյ: Իսկ  
 վարին մասերն ալապատրէ տախտակով  
 գրցուած էին, և պղընձէ ճանկերով պատուով  
 վրայ հաստատուած, որոց վրայ նկարուած  
 էին պատերազմի և որոսոյ տեսարաններ:

Ասոնց մէկուն վրայ կը տեսնուէր յաղ-  
 թաբազուկն Նիբրովթ, որսորդ քաջա-  
 ղեցի իլու սասուռոյն, որ նետակար վիրա-  
 ւորեալ առիւծոյ մը վրայ կը վազէր: Տեղ  
 մ'ալ նկարուած էր երկինց եօթն զնդից  
 աշտարակն, անկատար մնացած լեզուաց  
 խառնակութեամբ: Ուրիշ տեղ մ'ալ մեծ  
 թագաւորն գլուխ կեցած էր Որէք քաղքին  
 հիմնարկութեանը: տարբեր տեղ մ'ալ նոյն  
 իրենք արեւորազմական կառաքը մէջ էր,  
 լայնալիճ ու սնդաքարը աղեղը ձեռքը ա-  
 ուած, Սեմայ որդին զԱսուր Սննարայ եր-  
 կրէն հալածելու դրից մէջ:

Նկարուած էին հօն Քուշայ ցեղին ուրիշ  
 թագաւորաց գործին ալ, Բեյէն սկըսեալ  
 որ Նեբրովթայ որդին էր, մինչև Դամիրա-  
 մայ ամուսինը ցերջանիկն Նինոս, որ կը  
 ներկայանար հօն բազում տախտակաց  
 մէջ, ըստ թուոց իր յաղթանքանցը: Այդ  
 նկարուց միոյն մէջ մեծ ինքնակալն նստած  
 էր արծաթապէրճ գահուն վրայ, արքայա-

կան թագով և ոսկեթել սպիտակ պատմունճանաւ, և ունէր քովը երկու ծառայ, որոց մին խարազանը կը շարժէր նշան իր բացարձակ իշխանութեանը, և միւսն ալ թագաւորին գէնքերը կը բռնէր, և կ'անցնէին գահուն առջեւն պարտելոց երկայն շարքը, ձեռքերին կոնակնին կապած: Աւրիշ տեղ մ'ալ կը տեսնուէր գետապատ քաղցրի մը պաշարումը: Պաշարողը կ'ը մըղէին դէպ 'ի պարիսպը փայտակառոց դիւնալից աշտարակներ, և սպաշարեալ ծոցովուրդն քաջութեամբ կը պաշտպանէր ինք գիրքն պարսպաց վրայէն նետ ու հրացեալ ձիւթ թափելով վրասին: Քաղցրին ուրիշ մէկ կողմն ալ կը փախչէին կանայք եղանալու՛ զառքերով, և երկչոտ մարդիկն գետընկէց կը լինէին, ուսուցեալ տիկերու վրատակացած:

Սրահին այս բաժանմանց մէկուն մէջ կը կանգնէր Դամիրամայ գահը, բարձր ու շքեղ կոյտ մ'ոսկւոյ ու արծաթոյ. և վրան բեհեզէ հովանի մ'ունէր, յողթուած ծոցովոցոց պատկերներով դարձաւորաւ, առոր կ'իլլըցուէր քանի մ'աստիճանօք հոյակապ գորգով պատած: Երկնակն ու թեւաւոր պատկերն՝ նշանք աստուածութեան, կը փայլէին թագուհւոյն գահուն վրայ, որուն շրքս կողմը ու գահուն աստիճանաց վրայ, անշարժ կենցած էին հովանեցաւորք, սիրամարզի փետրէ բարձր հովանոցով, դինակիրք՝ նշանակիչք Դամիրամայ պատերազմական քաջութեան, գաւազանակիրք, թարգմանք ևս պաշտօնակց իր կամայքը: Ստնցմէ ետք կու գային թագուհւոյն սպանուազարմ ընկերքն՝ պերճազգեստետլք. ապա բոլոր արքունեաց սպային աստիճանաբար, զորականք պատենաղէնք, քնարահարք, փանդոներգահ կ և ուրիշ զանազան երգեցիկներ, նաժիշտներ և այլազգի ու այլատորազ գերիներ:

Դամիրամ կը ճաճանչէր վերէն: Բարեւական թագուհւոյն ծածկուած էր պարանոցէն մինչև ոտքը բեհեզեայ մանուշակագոյն պատմունճանով մը, ոսկեհիւս ու ալանակապ. և անոր վրայէն կրկնոց մ'ունէր որ ծալ 'ի ծալ կ'իջնար մինչև 'ի վայր, զպիտով մէջքը ոսկի գօտուով մը. և պարանոցին վրայ փողպապ մը կար եօթն կարգ թանկագին սկոնքներով զարդարուած: Կը կրէր թեւերուն վրայ ոսկեհուռն մանուշակներ, և մատանց վրայ ալ սկաւնազարդ մատանիներ: Ունէր աջ ձեռքը իշխանական գաւազան, և ձախին մէջ ալ ներգրինի ծաղիկ մը, նշան իր աշխարհակալութեանցը մինչև ցափուռն ինդոսի:

Անխուով հանգարտութիւն մը տիրած

էր թագուհւոյն վրայ, իսկ բազմութեան վրայ ալ խորին լուսթիւն մը. և ասիկա միայն բաւական էր ցուցնելու Դամիրամայ իշխանական զօրութիւնը, առանց հաշուելու այն արահէն շքեղութիւնը, զոր կը կուխէր Լայոց թագաւորն հազարապետին առաջնորդութեամբ, որ զսրատանի թագաւորը գահուն առջև տանելէն թիչ առաջ ըսեր էր.

— Դիտու արգեօք, ո՛վ տէր, թէ ի՞նչ է մեր սովորութիւնը, մեծ կամ փոքր, երբ արքայական մեծվայելուցութեան առջև կ'ելլանք:

— Այ, — պատասխանէր էր Արա, — ի՞նչ է արգեօք, կ'ազէի դիտանալ:

— Խոնարհելու երկիրպագանել, — Այլ յո՛ւ, կը կրկնէր հազարապետն, տեսնալով պատանոցն տհաճութիւնը, — այր ասիկա մեր օրինակ մէջ զեղեցկազոյնն է, որ կը պատուիրէ պատուել զթագաւորս, նկատելով 'ի նոսա գ'իսս, որ կը սահպանեն զամենայն արարածս: Դու յԱրամաիր կը պատուիս, ո՛վ տէր, և Դամիրամ յարբուսնիս իւր 'ի Բաբելոն:

Լայոց թագաւորը լաւ իմանալով իր առաջնորդին միտքը, աւելի բան մը չէր ըսած, և ոչ իսկ հաղորդէր էր նմա իր մտածութիւնները, այլ մտեր էր Ներքովթայ արահը յառաջելով խոնարհ քայլ անվախ գնացիւք, երկու կարգ պալատականաց միջէն, որ կ'երկայեցէին գահուն քովէն մինչև 'ի դուռն արահին, ձգելով մէջ տեղը ընդարձակ անցք մը: Երկայն էր ճամբան, քայց աւելի ևս երկայն կը թուէր՝ անցնելով այդ երկու կարգ մարդկանց միջէն, որոց աչքերն իրեն դարձած էին: Բայց նա անխուով էր, թէ պէտ և կը տանջուէր յանձն իւր մտածելով որ ուրիշ մարդոց հաւասար պիտի ծնրագրէր Բաբելոնի թագուհւոյն առջև, քայց կը խորհէր ծնելով միայն հատուցանել այդ մեծարարով հարկը:

Այս մտածութիւններով երբ կը յառաջէր դէպ 'ի գահը, հետուէն ստուերախառն լուսոյն մէջ կանանց խումբ մը զարկաւ աչքին, և ուրախութեամբ փայլեցաւ երեսը: Արգեօք անոնց մէջ էր մեհենին մէջ տեսած անձանօթ տիկինն, կը հարցունէր ինքն իրեն: Եւ սկստաւ զարմանաց հծծիւն մը լսուիլ արտոխին մէջ տեսնալով այդ վայելազէմ պատանին, որուն գեղեցկութիւնն աւելի փայլ մը կու տար իր աստիճանին:

Հաննելով վերջապէս գահուն ոտքը, կեցաւ հօն, և աջ ձեռքը կուրծքին վրայ տաննելով ծոնցաւ թագուհւոյն առանց վեր նայելու:

— Մեծդ Շամիրամ, յաւիտեան կեաց, ըսաւ պատանին:

— Եւ զու ես, ազնուական սերունդդ Հայկայ, — պատասխանեց վերէն քաղցրահնչիւն ձայն մը:

Դողաց պատանին 'ի լսելն և խռովեցաւ, կարծես ծանօթ էր լսած ձայնն: Վերուց աչքերը նայելու և մէկէն վար առաւ, կարծես կայծակէ մը զարնուելով. և տագնապած իրրև թէ աստուծոյ մ'առջին կեցած ըլլար, ծնրադրեց աստիճանաց առջև:

Շամիրամ ընդ առաջ գնաց պատանոյն, բռնեց ձեռքէն և 'ի վեր առաւ: Արա բացաւ աչքերը, և ապշած իրեն կը նայէր:

— Թագուհիդ իմ . . . թոթովեց նա, զգատանալով փորք մի:

— Աթոսա, — շքնչեց նա ականջէն սիրալիր ձայնով:

Եւ առնելով մարգարտայեռ վարսակալը, զոր կը բերէր ազնուական պատանի մը բարձի մը վրայ գաւազանին հետ, գրաւանձամբ Արայի դեղձանամազ գլխուն վրայ:

— Ա, թագաւորդ Հայոց, ըսաւ նա խնդութեամբ, առ գաւազանդ յերջանկութիւն ժողովրդեանդ, ինչպէս զտուրդ յերկրիդ թնամեացդ: Որդիդ Արամայ, չես զուհարկատու Շամիրամայ, այլ նիգակակից ու բարեկամ:

Ապա դառնալով առ բաղնութիւնն և առ մեծամեծս արքունեաց, ըսաւ բարձրաձայն.

— Հայոց թագաւորը մեր հիւրն է: Թագաւորէ մշտնջենաւոր բարեկամութիւն լինան արժուոյնն ու դաշտագետնոյ ստիճոյնն մէջ:

ԳԼՈՒԽ Զ.

Խ Ր Ա Խ Ն Ա Ն Ո Ւ Թ Ի Ը Ն .

Արեւ մտնալու մօտ էր, երբ թագուհին՝ Արայի և իր արքունեաց մեծամեծաց ընկերակցութեամբ շարժեցաւ. Ներքովթայ սրահէն դէպ 'ի խրախճանութեան սրահը, զոր պարտաստել տուեր էր 'ի պատիւ իր Հայատանի հիւրին:

Քաբէլական սովորութեան համեմատ, թագաւորներն առանձին սեղանի վրայ կը նստէին, և իրենց նշանաւոր ու սիրելի կոչանկանքն ալ գիմացը ուրիշ սեղանի վրայ, անթափանց վարագուրով մը թագաւորական սեղանէն բաժնուած, այնպէս որ թագաւորն իր նստած տեղէն կարենար

տեսնալ զիրենք առանց տեսնուելու: Բայց հասարակաց ու հանդիսաւոր խրախճանութեանց օրեր՝ մէկ էր սեղանը, որուն կը մասնակցէր թագաւորն ալ, ընկերակցելով իր սեղանակցաց. և ասով միայն կը տարբերէր իրենցմէ, որ ոսկիծայլ աթոռի վրայ կը նստէր, և առանձին գինի ու ջուր ունէր, ուսկից խմելն արգելուած էր առանց իր հրամանին, և ասիկա մեծ շնորհք ու պատիւ կը համարուէր:

Մէկ անգամ միայն սեղան կը նստէին, օրուան ռազմավարի զբաղմունքներէն ետքը, բայց երկար կը տեւէր: Արքունեաց մէջ առատ ուտելիք կը սպառէր ամեն օր. հազար կենդանի, հաշուելով միատեղ զեղն, զճի, զցիւռ, զուզա, զխոյ, և զուլ, որոց կարգէն էին նաև որսի կենդանիներն ու ձուկն: Կերակուրը նաև մեծամեծաց սեղանը կու գար, անկէց ետքը պաշտօնէից սեղանը կ'անցնէր, և ապա նորէն խոհանոցը կը դառնար առատութեամբ, ուր կը յազենային արքունեաց զինուորներն և սպասաւորք:

Կը գործածուէր նոյն ստեն արմատոյ ու նուան գինի, վասն զի որթն տակաւին մշակուած չէր 'ի Սենաար այդ պիտոյից համար, թէ և ծաղկած էր 'ի Քանան: Հացը սովորաբար եգիպտացորենէ կը շինէին, վասն զի ցորենը մեծ ծախքով և 'ի ցոյց միայն արքայական պերճութեան, Մեստրիմճեռաւոր երկրէն կու գար, զոր կ'ուռօգանէ Նիլոս գետ: Հասարակաց սեղաններ նստելով կը լուսաւորէին, վառելով զանոնք մեծամեծ անօթոց մէջ, և դնելով իրարմէ համաչափ հեռաւորութեամբ եռոտանեաց ու պղընձագործ ճրագարանաց վրայ: Պղտի տեղերը շուշմայի իւրով կը լուսաւորէին, որ կ'անցնէր բեհեղէ պատրուգաց միջէն, զուրս ցցուելով պղընձէ կամ կարմիր կաւէ կանթեղներէն, վայելչապէս զարդարեալք քմահաճոյ ու երևակայական նկարներով:

Նոյն օրը խրախճանութիւնն 'ի պատիւ Հայոց թագաւորին ըլլալուն, սեղանը կախազանաւոր բուրաստանաց արտաքին գաւթին մէջ պատրաստուած էր, որ լայն սրճակ սրահ մ'էր, բաց երեք կողմամբ, և մարմարեայ սիւներով զարդարուած: Այս սեանց մէջ կը սիւտուէին սպիտակագոյն ու մանուշակագոյն վայազոյրներ, արծաթի օղակներով ու բեհեղեայ կապերով հաստաստուած, որոնք թեթևակի կ'ուռէին հեղանունը ու քաղցրաբար հողմով, որ կ'անցնէր յաստիկաց ու կիտրոնի վրայէն:

Գրուած էին շուրջանակի անուշահոտ փայտէ սեղաններ, սրբաբեհեղ փոռցով

արտած. և սրտէն խորը կը տեսնուէր բարձր ու զարդարուն սեղան մ'ալ, որուն ծայրը թագուհւոյն սոկիզէն աթոռը դըրուած էր և չորս կողմը արծաթի բաղմոցներ. իսկ գետինը պորփիւրէ, կուանդէ ու սպիտակ սիրմարիտնէ քարանց ազոցիկ հատրնկում շինուած էր: Ար փայլէին մաքուր փոռոցին վրայ ոսկեման անոթներ, պարմանք Ալվիհրայ, ուսկից կու գար յայնժամայդ մեծագին մետաղը, և յախճապահէ խայտանկար բարձր ամաններ, որոց միջէն կը բարձրանային փունջ 'ի փունջ և կը ձռէին հովանածն զանազան տեսակ ու զյոզնագիւտ անոթիկներ. հարմանման սպիտակաթեթեան, ցնծախոտ՝ որ կը ծորէ տրտմութեան փարստիչ նիւթ մը, շուշան՝ պարմանք հովտաց, վարդ, յասմիկ ու մանրագոր անուշահոտք:

Իրուած էին կոչանակաց առջին արծաթէ բաժակներ, հիւանակի գործածածք բարելական ճարտարութեան, սպակի մեծափոր ու նեղապարանոց անոթներ, զորոնք կը զրկէին Սենաարայ թագաւորներուն Տիրոսի ճարտարագործները. կաէ գունակ գունակ ու փոյրուն պնակներ, ծայրը մետաղէ փոսկրէ զգոյնը՝ կերակուրը բերանը տանելու համար, և քարէ գանակներ՝ նրբաբար հտոեալք: Եւ երբ մատուռակք կը խառնէին մեծամեծ սափորոց մէջ արմաւոյ քաղցրահամ գինին, և զով ջուրը կաէ անօթոց մէջ, ներքսպէս նուշով շփեալ՝ որպէս զի աւելի ախորժակած ըլլայ, ներքինք կարգ կարգ կ'ըլլային խառնոցէն պղքնձէ սեւտեղներու վրայ եզան և ուրիշ կենդանաց մեծամեծ կտորներով, զորոնք սպա տաճարակեղք յաջողութեամբ կը կտրէին շերտ շերտ ու կը բաժնէին բազմականաց:

Բերուեցաւ նոյնպէս սեղանին վրայ փետրագարգ փառիան, կտբաւ, ջայլաման հաւկիթ, ձուկ, աղածոյ, ձիթապտուղ և ուրիշ ուտելիք: Պարտոցուցին զարձնայ եղևնեայ գեղեցկաձև տփոք մէջ զանազան սեւակ համեմներ, անոմ անուշահոտ, սա միթ՝ որ կը զարթուցանէ նուաղեայ ու անզոր զօրութիւնը, և թովկեան բեմոն՝ որ կը դուրսցնէ զուճալ, քաղքան՝ որուն հոյզը հանդական է բայց և բազմածախ:

Ամեն նոր կերակուր փոխաւերուն, կը լսուէին տաւղի, կիթափ ու սրնգի ներգաշնակութիւններ, որոնք կը զուարճացունէին զբազմականան: Իրաժիտք խրախճանութեան սրակին մէջ չէին, այլ մտաւար պարտիզին ծառուց տակ, որպէս զի բազմականաց ականջը չխայթեն, և արգելք չըլլան անոնց խոսակցութեանը: Լոյսն, ա-

ռատութիւն համադամ կերակրոց, անուշահոտութիւնը ու քաղցրածայնութիւնը երգոց՝ զուարճալի կ'ընէին ընկերութիւնը ու խնայրը:

Հայոց թագաւորն ապշեալ, և գրեթէ ուշամտաց այնչափ հրաշքեղ մէջ որ չորս կողմն առէր էին, և խոտովեայ այնչափ նորանոր պատահարօր՝ որ մէկ օրուան մէջ կրակեցան, նստեր էր Շամիրամայ աջակողմը: Իրեն գիմայը բազմեր էր քահանայապետ, փոխանորդ, Բաբելոնի աստուածոց, աւելի հեռու Մարաց իշխանը, ամենատեսն Չերտուչք, տպա կարգաւ ըստ աստիճանի պատուոյ՝ թագաւորութեան միւս սպաշուներայքն և սուպք:

Ղիտուա հոն չէր. թագաւորական պատանին սովորութիւն չունէր սեղանակցելու իր մօրը, և ոչ ալ մասնակցելու արքունեայ հանդէսներուն: Արեւելեան ինքնիշխան մեծավայելութիւն չէր ներեր իշխանութեան ու փառքոք բաժանումն. թագաւորին առջև իր մեծամեծներն միայն սկտի կենային, ամենքն ալ իրեն ծառայք, թագաւորական շնորհիւ միայն որոշեալք 'ի ասանկն, որ փոխգլխական էր նման հոյճոյ. և ոչ իսկ ընտանեայ միջէն մէկն՝ իր կենդանութեան ու թագաւորութեան ատեն, կրնար ելլալ արքունեաց ամփոփ սահմանէն, տեսնուելու ու զատիք ընդունելու ժողովրդէն: — Բայց արգեօք նոյն ժամուն աւելի երջանիկ չէր սլատանին, Բաբելոնի պարսպէն դուրս իր սիրելոյն Անահիդին քով: Գոմարայ արմաւեճեաց տակ, որուն հրաման տուեր էր իր անուցիչն Չերտուչք:

Խորախորհուրդ ու սրամիտ իշխանն սեղանակից էր Շամիրամայ, և նստեր էր խաղաղ ու հանգարտ կերպով: Բայց արգեօք սիրամ էր նա երբէք զթագուհին. Ասիակ զաղտնութեան անլոյս խաւարին մէջ ծածուղուած էր: Տակաւին կը սիրէր արգեօք. Սմենեին բան մը չէր իմացու էր անտարբերեայ դէմքէն: Իսկ իսկ Շամիրամ որ քաջ ու վարժ էր իմանալու սրտից ծածուց, նոյն իսկ Շամիրամ՝ թէ որ աչքերը զարժենելու ըլլար ու զիտէր այդ անողջոյ ու անտարբեր դէմքը, անուշա չէր կրնար իմանալ անոր սրտին խորհուրդները: Չերտուչք ծածկախորհուրդ էր, ազնուական կերպ մ'ունէր, և չորմունքներն չափուած էին. սրտին զաղտնիքներէն զայն միայն կը յայտենէր՝ զոր կ'ուզէր յայտնել:

Արգեօք վրէժնագրութեան խորհուրդ մը կը տածէր սրտին մէջ. կամ թէ զբժկամակ էր իր հայրենեայ գերութեան լծոյն: Չերտուչք՝ Բաբելոնի արքունեաց յարգոյ անձն, Ներքովայ գաւազանին

հանդերձեալ ժառանգին իմաստութեան ուսուցիչն, և Նինոսի մեծակամբաւ սյրուոյն խորհրդականն՝ խորանշուղ ծովու կը նմանէր, որ կը ծածկէ իր անտեսանելի խորոց մէջ ցասման գաղտնիքը. և թէպէտ երեսը կը ծիծաղի կապտազոյն, բայց յանկարծ կը յուզի ալիքները լէգէոնաբար, և բուն թափով կը խուճեն յափունս, յահ և 'ի դողուն տեսողաց, Բայց իլու ու Ներու և բոլոր գերագոյն գիբ ինչպէս կը հանդուրժէին այս բանին: Աւագ գուռէ անոնք և ոչ իսկ ուշ կը դնէին. այդ կնիւղան լոյսերն՝ որ բոցակերպ կը փայլին երկնից կամարին վրայ, յարարթուն հըսկողք, մահացուաց գործերուն հոգ չէին տանիր: Քաղցեայք, իմաստուն աստեղահմայք, բան մը չէին հմայեր յաստիցա: Անոնք կամ որովհետև տակաւին քահանայական դասակարգութեան մէջ մտած չէին, կամ չափաւորել ուզելով թագաւորաց ամենակարող իշխանութիւնը, միտ չէին դնել այդ անխուս մարդուն, որ հանույսցեր էր թագուհւոյն:

Չերտուչդ իր մերձաւորաց հետ միայն կը խօսէր, բայց կը դիտէր միանգամայն իւրաքանչիւրոց խօսքերը, շարժուածքները ու նայուածքները: Սէրպի չէր նա սըրտանց, վասն զի ասելով թիւնն դառնացուցիչ է իբրև զգժոխս:

Հայոց թագաւորը սովորականէն աւելի քիչ կը խօսէր, որովհետև զգածմանց ներքին յուզումը չէին ներքեւ նմա շատախօսել. բայց ասոր հակառակ շատ իսկ կը խօսէին աչքերը, փայլելով վայալակակերպ: Շարունակ Շամիրամ ու պատանին իրարու կը նայէին: Ո՛ր էիր նոյն ատեն, ո՛վ Սանտի, ո՛վ կաթոգին բարեկամդ անոր պատանակութեանը: Ո՛ր էիք դուք խիստ պատգամբոյ, որ խօսեցիք Բզնունեացնուիրական սօսինքնէն:

Այսպէս խրախճանական զուարթութեան մէջ ընկղմած թագուհին ու պատանին, երկուքն ալ երջանիկք, մոռացան ամեն բան: Արա կը մտածէր որ Շամիրամ անմեղ էր, և թէ զրպարտութիւնք էին վրան խօսուածները: Թագուհւոյն ներկայութիւնը կը ջնջէր մտքէն պատգամին ամեն իրիստ գուշակութիւնները: Միակ ցաւն այն էր՝ որ քիչ ատենէն Հայաստան պիտի դառնար, յԱրմաւիր իր արքունիքը, տիրուր և անմարդի. բայց այս մտածութիւնն ալ կը ջանար ըստ կարի հեռացնելու մտքէն: Ճակատաբիր որ յանգէտս ձգեր էր զպատանին Շամիրամայ ճիրանին տակ, չէր ուզեր արդեօք ուրիշ կերպ անօրինել զայն:

Շամիրամ կը մտածէր որ իր գահն այնպէս

մեծ էր; որ կրնար ընդունիլ իր սրտին սիրելին, այնպէս չքնաղ՝ որ կրնար պատիւ ընել Արայի: Եւ միթէ իրարու համար եղած չէին. բնութիւնն նոյն վախճանաւ ստեղծած չէր պիտինք: Շամիրամայ մտաց մէջ, աշխարհ, Բարեւոյն, արքունիք՝ ուրիշ բան չէին, բայց եթէ անազին բուրգ մը, բարձրացեալ 'ի Նիսրաքայ, տէր բախտին, զետեղելու հօն զիրենք:

Քիչ ատենէն ամփոփեցաւ սեղանը, և զիչերային ստուերաց երկայնելուն ատեն՝ վերցան հովանիքն որ կ'արգելուրին կազդուրիչ զովարար քամին: Ար փայլէին պարտիզին տնկոց մէջ խորհրդական լոյսեր, և վերջ երկնից կապուտակ կամարին վրայ կը շողողէին լուսապաճոյն աստղեր:

— Գոհութիւն Գից, — ըսաւ քահանայապետն, վերցնելով ձեռքերը դէպ 'ի երկինք. իրնցմէ կու գայ մեզի ամենայն: Բարեւոյն կը խոնարհի հուրթեամբ անոնց ատջին, կը յարգէ ու կը պաշտէ զիրենք:

— Իսկ հիմա, — ըսաւ թագուհին, — քան որ Սին նուաղ լոյսերովը կը լուսաորէ զաշխարհ, և քաղցը է հանգչել զիչերային քաղցրաշունչ հողմոյն տակ, բերուն տարեգիրք Բարբու: Մեր Հայաստանի ազնուական հիւրն ճանչնայ անոնց մէջ Արքաւոր բարեկամ ազգին ազնուականութիւնս:

Շամիրամայ այդ խօսքին, հազարապետը մէկէն ոտք ելաւ և դնաց դէպ 'ի գուռը, ուր իր մէկ ակնարկութեամբն երևցաւ մէկէն գրագիրն, որուն յանձնուած էր պահպանել բարեւական յիշատակարանաց դիւանը:

Գրագիրն երբ ներկայացաւ թագուհւոյն, յերկիր խոնարհեցաւ, մինչև ճակտովը գետին դպչելու չափ:

— Մեծք Շամիրամ, — ըսաւ ապա գրագիրն, ձեռքերը դէպ առ նա ուղղելով. յաւիտեան կենաց:

— Ելիր, — ըսաւ թագուհին հրամայական ձևով, և ցուցուր մեզի թագաւորաց յաջորդութիւնը, սկըսեալ այն օրէն յորում Բէլ, մեծն աստուած ստեղծիչ, ելաւ անսահման ժամանակին ծոցէն, մինչև այս երջանիկ օրը:

— Պատրաստ եմ հրամայածք կատարելու, — պատասխանեց գրագիրն ոտք ելլալով: Աքթաթ խնամքով նշանակած են իրենց հարց աւանդութիւնները: Աստեղաց շարժումը, աստուածոց երևումը ու թագաւորաց գործերը գրուած են սրբազան տառերով պապիրէ թերթից վրայ, զոր ուսոյց Ովան Սենաարայ բնակչաց: Խորին լուր թիւն մը տիրեց խրախճանու-

Քիան սրահին մէջ, Գրադիրն նստաւ ա-  
թոռակի մը վրայ արքունի մեծամեծաց առ-  
ջին, լուծեց ձեռքի պապիրէ Հաստորոյն կնի-  
քը, և ապա դարձնելով երեսները, այս-  
պէս սկսեաւ կարգալ Աքթատի ցեղին հին  
յիշատակարանները, ի լուսնի ամենեցուն:

ԳԼՈՒԽ Է.

Նախապատում աւանդութիւնք.

« Ի սկզբան, ամենայն ինչ թուր ու խաւար  
էր, յորում կը շարժէին խառն ՚ի խուռն ա-  
մենայն տարերքը, զորոնք կը տնանանք:  
Կային նոյն ատեն տարօրինակ էակներ,  
երկրիմի ու շորերթեան հրէշներ, երկ-  
գլուխ ու եղջիւրաւոր, նոխարտուն ու այծ-  
տան կենդանիներ. կենդարտք, յուշա-  
պարիկք, մարդաձև ցուլեր ու ձկնատտուն  
լուծեր, և անբաւ ուրիշ տեսակ սողուններ  
ու օձեր անչափիկ երկայնութեամբ. Իւ  
այս ամենայն իրաց խառնակութեան մէջ  
կը թաքաւորէր անտեսաբար մեծ մայրն  
Ոմորկայ, որ կոչի նաև Տալատտա՝ Քաղ-  
դեսայց սրբազան լեզուին մէջ:

« Երևցաւ յայնժամ ի Քէլ աստուած լու-  
սոյ և օդոյ: Եկաւ նա՝ Բաճաղիմայ անհա-  
մար զնդերով, և իր բոցափայլ սրոյն մէկ  
հարուածով բաժնեց զՈմորկայ յերկուս  
մասունս, և ձևացան երկինք ու երկիր:

« Բայց այդ բազմաթիւ պիղծ հրէշներն  
չկրնայով տանիլ աստուածային մեծ լու-  
սոյն՝ մեռան, Բէլ խոցեց իր պարանոցը,  
և անձրևեց արեան գետակներ: Բաճաղիմք  
հետեւելով նորա օրինակին, խառնեցին ի-  
րենց արիւնը նորա արեան հետ, ուսկից  
ծնան մարդիկ, և այս պատճառաւ բանա-  
ւորք ու հազորքք եղան աստուածային ի-  
մացականութեան:

« Իւ այն ատեն եղաւ ժամանակն, Բէլ  
ստեղծեց զաստեղծ, զարև, զլուսին և հինգ  
մոլորակները, և սկսեաւ առաջին զարն ՚ի  
Բարելուն: Տասը թագաւորք թագաւորեցին  
հօս, Ալովրոսէն մինչև ՚ի Քախտութրոս:

« Ալովրոսիք՝ որ առաջին թագաւորն ե-  
ղաւ, յաջորդեցին Ալապարոս ու Ալմկոն.  
Ե իրենցմէ ետքը Ամենոն, սիրելի երկնից:

Արիկա օր մը ծովափը կեցած ատեն,  
տեսաւ զՈվման որ կ'ելլար արևաց միջէն,  
աստուած ծովու, ձուկն մեծ, մարդաձայն  
ու մարդակերպ. քայց մարդոյ նման կերա-  
կուր չէր ուտէր, այլ ամեն առաւօտ կ'երև-  
նար արևունքը ու ամեն իրիկուն կը խորա-  
սուզէր յանդունդս: Սա սորվեցուց Ամեն-

նոնի սրբազան տառից գործածութիւնը,  
ինչպէս նաև այն արուեստները՝ որք երջան-  
կացուցիչք են մարդկութեան, սերմանել,  
հնձել, համախմբել ՚ի քաղաքական կենա-  
կցութիւն, պարսպել զբազբա, շինել մե-  
հեանս ու զոհել Վից:

« Յառաջ քան զայն ժամանակ, մարդիկ  
ոչ օրէնք ունէին և ոչ պաշտօն: Վրանա-  
բնակ կ'ապրէին կամ կը թափառէին կեն-  
դանեաց պէս. կը զարմանային քարին վրայ,  
և կը վախնային փայլակէ ու կայծակէ որ  
կը ճայթէին յամպոց: Բայց Ովմանի տուած  
հրահանգութեանէն ետքը՝ ճանչցան զաս-  
տուածս, և մատուցին անոնց դարգիւնս  
երկրի: Իւ այս կերպով ծնաւ Ովայի պաշ-  
տօնը, աստուած կոհակածին, թագաւոր  
ստորին աշխարհի. Բելայ պաշտօնը, լուսա-  
պայծառ ու կարգադիր Ոմորկայ, և Իլուի  
պաշտօնը, աստուած ջրոց, երկկերպարան,  
խառն ընդ այրականն և ընդ կանացին:

« Իմաստնոյն Ամենոնի մեռնելէն ետքը,  
յաջորդեց Մազալուր, և իրեն ալ փոխա-  
նակեց Իլուան, որուն կենդանութեան ա-  
տեն երեցան զարձաւ ուրիշ չորս մար-  
դաձուկն օրէնսդիրք ալ, և շարունակեցին  
Ովմանի սրբազան գործը, որ է օւսուցանել  
զժողովուրդս: Իլուանի յաջորդեց Եղու-  
րուկ, որուն ժամանակ տեսնուեցաւ ձուկն  
Իագոն. ապա թագաւորեցին Ամենփին,  
Ոքսիարտէս ու Քախտութրոս:

« Ասոնք մէկ մէկ հսկայներ էին, և կ'ա-  
պրէին մաշի քան ինչ որ սահմանուեցաւ  
սոցա մուկանացուցաւ: Ասոնց վերջինն  
Քախտութրոս, թագաւորեցութեամբն սար  
ջրհեղեղէն առաջ, Բարեպաշտ մարդ մ'էր  
և հմուտ հին աւանդից՝ զորոնք ընդունը  
էր իր նախորդներէն, և փորագրել տուած  
էր քարէ տախտակաց վրայ, հինգ պա-  
տուիրանաց սրբազան օրինաց հետ:

« Թէ և ինքը բարեպաշտ ու աստուածա-  
վախ անձ մ'էր, սակայն նոյնպէս չէին ժա-  
մանակին մարդիկը. որոց ստօրեւութիւն-  
ները տարածուեր էին երկրին վրայ, և  
կ'արհամարհէին բոլոր օրէնքները ու պա-  
տուէրները: Արդէն երկար ժամանակէ ՚ի  
վեր իմաստունք քննելով աստեղծը, կը  
զուշակէին աշխարհիս վերջը. բոցց մար-  
դիկ հաստատուած ըլլալով իրենց վատ-  
թար ունակութեանց մէջ, փոյթ չէին ընել  
երկնից նշաններուն:

« Այն ատեն ձուկն-աստուած երեցաւ  
Քախտութրոսի այեաց միջէն, որովհետև  
ինքը միայն հաճոյ էր երկնից, և ծանոց որ  
քիչ ատենէն ջրհեղեղ պիտի ըլլայ և պիտի  
սպականէ ու քնջէ զամենայն լուսն կենդա-  
նի: Ուստի նաև մը շինէ ու ապաւինի մէջը,

իր որդիքներովը և ընտանեօք, և պատ-  
րաստ ըլլալ նաւարկելու, որովհետեւ հա-  
սած է ամպարչտաց վերջին ժամը:

« — Ո՛ր պիտի ուղղեմ ընթացքս, —  
կը հարցնէ Քսիսութրոս:

« — Դեպ առ աստուածս, — կը պա-  
տասխանէ Ովան. — վասն զի 'ի նոսա  
է միայն նաւահանգիստն իրկութեանս: Քաջալեռուէ, ո՛վ Քսիսութրոս. նուիրա-  
կան օրինաց տախտակները ու հարցոյ վա-  
ղեմի աւանդութիւնները թաղէ Արպարայ  
անկիւնաւոր քարին տակ. այնպէս մեծ ըլ-  
լալ նաւը, որ կարենայ ընդունիլ ամեն տե-  
սակ ուտելիք, սերմանա և օգտակար անա-  
սուններ՝ մարդկան ծառայութեան համար.  
ձեփէ զայն նաւթիւ ներքոյ և արտաքոյ, որ  
կարենայ ընդդիմանալ ջրոց բռնութեան, և  
մէկէն լընցընելուք պէս զայն, քալուէ  
այգ ապահով տապանին մէջ ընտանեօք:  
որովհետեւ չուտով պիտի պատահին ան-  
գունդք ու բացուին սահանք, և ջուրք պի-  
տի ողողեն զերկիր:

« Քսիսութրոս հնազանդեցաւ հրամանին,  
և մէկէն իմաստուն ճարտարագործի մ'օգ-  
նականութեամբ՝ զոր ձուկն-աստուած նշա-  
նակեր էր, ձեռք զարկաւ նաւուն շինու-  
թեան, որ հինգ վտաւան երկայնութիւն և  
երկու լայնութիւն պիտի ունենար: Ներս  
մտաւ Քսիսութրոս իր կնիկովն ու որդիք-  
ներովը, աննելով միտաւղ անոնց կնիկնե-  
րը ու որդիքներն ալ, որոնք բաղամթիւ էին:  
Կար նաւուն մէջ առատ կերակուր, ամեն  
տեսակ տնկոց սերմ, և զոյգ մ'ամեն տե-  
սակ կենդանեաց, 'ի բաց թողով այն ա-  
մեն էակները՝ որ ջրէ ու ապականութենէ  
կը ծնանին:

« Մարդիկ կը պնդէին տակաւին իրենց ա-  
նօրէնութեան մէջ և կ'անարգէին զՔսի-  
սութրոս: Երբ անանձնացաւ նա բոլորովին  
նաւուն մէջ, հանդերձ իր որդիքներովը  
և ընտանեօք, յանկարծ մթազնեցան եր-  
կինք, տեղատարափ անձրև մը սկսեալ  
իջալ ու ծովը դուրս վազեց իր սահմանէն,  
վասն զի իլու ջրոց աստուածն խոտկեց  
զանդուին: Նաւը բարձրացաւ այնաց  
վրայ, և ահագին մեծութեամբ ձուկ մը  
եկաւ կեցաւ նաւուն ցուկը, և կ'առաջ-  
նորդէր անոր զիթայազրծ տարերց բռնու-  
թեան միջև: Եւ էր աս նոյն ինքն Ովան,  
և Քսիսութրոս լաւ իմացաւ որ աստուծոյ  
մը ձեռքը պաշտպան էր իրեն, որովհետեւ  
ալեւաց բռնութենէն ամենևին չէր վնա-  
սուէր:

« Ըստ օրեր տևեց իլու աստուծոյն ցա-  
սուելը, այնպէս որ բարձրագագաթն լեռ-  
ներն անգամ ծածկուեցան ջրով և ան-

նայն մարմին չարժուն ապականեցաւ: Զու-  
րը երկրիս ամենաբարձր կողմերն անգամ  
ծածկուէն ետքը, սկսեալ նուազիլ, և եր-  
կինքն զազրեցաւ անձրևելէ: Այնատեն Քը-  
սիսութրոս վտաահանալով այդ հանդար-  
տութեան, նաւուն յարկէն զոյգ մը թռչուն  
արձակեց, իմանալու համար թէ արդեօք  
բացուած է ցամաքը: Բայց խեղճներ ուտե-  
լու բան չի գտնաւորու և ոչ ալ հանդէտու  
տեղ, ետ դարձան: Քանի մ'օրէն ուրիշ  
թռչուններ ալ արձակեց, որոնք զացին և  
դարձան տղմաթաթաւ թաթիրով: Երրորդ  
անգամ մ'ալ արձակեց, որոնք զացին և  
մէկ մ'ալ չի դարձան. միայն մէկ ապաւնի  
մը դարձաւ բերանը ձիթենույ օստով: Աս-  
կէց իմացաւ Քսիսութրոս թէ ջուրն նուա-  
զեր էր ու բացուեր ցամաքը. և բանալով  
նաւուն ծածքը, տեսաւ որ հանդէտ էր  
տապանը Մարատայ գագաթանց վրայ:

« Մեծ ձուկը աներևութացեր էր, և ա-  
րևը կը ճառագայթէր 'ի հաստատութեան,  
և արեգական դիմաց կը փայլէր օդոյ մէջ  
ծիածանն լուսաւոր: Քսիսութրոս մէկէն ե-  
լաւ նաւէն, և նոր ասնելով իր կնիւը, դուս-  
տրը, և իմաստուն ճարտարագործը: Եւ  
իջնալով ձորագրեցին ու համբուրեցին զեր-  
կիր. ապա կանգնելով քարակոյտ սեղան մը՝  
երկրպագութիւն մատուցին աստուածոյ:  
Ի՛նչ բրին ապա: Նաւուն մէջ մնացողնե-  
րը տեսնալով որ գացողները չէին դառ-  
նար, իրենք ալ իջան նաւէն, բայց չզը-  
տան զոք, թէ և մեծածայն աղաղակաւ կը  
կը պարտէին շուրջ փնտուելով զիրենք: Տե-  
սան երկինքը երեսուսներ, և անոնց վրայ  
լուսաւոր ծիածան մը, և լսեցին Քսիսու-  
թրոսի ձայնը որ կը ծանուցանէր թէ ինքն,  
իր կնիւն, դուստրն ու ճարտարագործն  
յափշտակուեցան 'ի հանդուկան ողջակէզ  
Դից. երթան խաղաղութեամբ ու բազմա-  
ցրենն դարձեալ զերկիր: Իջան յերկիրն  
Սենաարայ, փորեն Սիպարայ հիմուները, և  
հաննեն սրբազան օրինաց տախտակները  
ու վաղեմի ազգաց յիշատակարանները. ա-  
պա անրին երջանիկ, քալելով արդարու-  
թեան համբան և պատուելով զերկնայինս  
որ փրկեցին զիրենք 'ի ջուրց:

« Այսպէս բրին Քսիսութրոսի թոռներն  
ու որդիքը՝ յետ զոհելու մի և նոյն սեղա-  
նոյն վրայ գոր կանգնեց իր Քսիսութրոս:  
Դուրս Հանեցին սերմանքը, և ցանեցին 'ի  
ձոց երկրի, կենդանիքը ու թողուցին ա-  
զատ որ երթան ուր որ կ'ուզեն: Մեծ նաւը  
մնաց հօս լեբան վրայ, որուն մնացորդ-  
ներն կեցած են ցայտօր, և քարացած նաւ-  
թէն բրձմանքներ կը շինեն, չարացած Հա-  
յեցուածոց ու անդհական երազոց զէմ:

« Ասոնք են ահա Սենաարայ առաջին քնակչաց աննդուծիւնները : Չրհեղեղէ սարողներն դաշա ինչալով, և բազմանալով յերես պազգ, ըստ անուան իրենց հօրը, որք էին Չրուան, Տիտան ու Յաբէթ, Սիւպարայ մօտ նոր քաղաք մը սկրսան շինել, որուն անունը՝ սապականիչ շրէն ազատելնուն համար՝ Բաբելոս գրին, այսինքն գուռն իլու : Եւ կակուղ կար ճաղիսաձև գործելով, և շաղախի տեղ կուպր գործածելով, զոր կը հանէին իսանուն մօտաւոր երկրէն, սկրսան պարսպել քաղաքը : Մի և նոյն ժամանակ ձևոք գարկին դարձեալ կանգնել ամենաբարձր աշտարակ մը, որուն գագաթը ծակոց դաչի, և ասիկա ըլլայ վկայ իրենց գորութեանը երկրիս վրայ :

« Բայց հազիւ թէ գործոյն կէսը հասեր էին, սկըսան իրարու լեզուն չի հասկընալ, և երկրաշարժն ու կայծակն ցրուեցին այդ կուէ լեռները : Այն ատեն Սեմ Չրուան, իրենց մէջ գլխաւորներէն մէկն, սկըսաւ ըռնանալ այլոց վրայ, և Տիտան՝ որ կոչի նաև Բաթ, առաջին պատմութեանց մէջ ու Յաբէթ, հալածեցին զինքը Սենաարայ հիւսիսակողմը, իրեն որդիքներէն մին՝ Քուշ, հայր Ներբովթայ, որորդք քաջադեցին իլու աստուծոյ, սկըսաւ հրամայել չորից լեզուաց ժողովրդեան, և իրեն թագաւորութեան սկիզբ - եղան՝ Բաբելոն, Աքքատ, Քաղանէ ու Որէք :

« Յապա ժամանակս, Ասուր, Սեմ Չրուանց ցեղէն, Եփրատայ ավուներէն Տիգրիսի փոխուներ անցնելով, հինիեց հօն Ղիսուէ, Քաղա, Հոէրոտ ու Հոնսէն քաղաքները : Միւս կողմանէ ալ Հայկ, Յաբէթայ ցեղէն, մերժելով հպատակիլ Քուշայ որդւոյն իշխանութեան, մեկնեցաւ իւրայնոց հետ, ելաւ ՚ի վեր քան Ղեփրատ, մինչև ցԱրարատ, և գրաւ հօն իր գահը : Իսկ Ներբովթ իր աթոռը անդողողէ կերպով հաստատելէն քիչ ետքը, բարձրացաւ յերկրայն Նիւրպրայ զօրաւոր թեւոց վրայ » :

— Թէ որչափ ճշմարիտ է ասիկա, — ըսաւ Արա մտքէն այս մասիս ընթերցման ատեն, — վկայէ զայն Հայոցձոր, ուր մեռաւ Տիտան իմ նախնայն նեաներէն : Եւ երգիծական ծախս մը փայլեցաւ չրթանցը վրայ . բայց զսպելով զայն, սկըսաւ գարձեալ մտադրութեամբ ուշ զնել Բաբելոս աննդուծեանց շարունակութեան :

Այլ Տամիրսո՛ որ շարունակ կը գիտէր զպատահին, իմանալով երեսնէն սրտին խորհուրդը, ընդհատեց զընթերցումը, և ըսաւ ազնուութեամբ .

— Բաբելոնի թագաւորաց մեծանունն նախայրեն, մեռաւ քաջութեամբ պատե-

րազմի դաշտին վրայ . ուրեմն ուղղէ սխալը, ո՛վ աչակերտը Քաղաքայց : Կը հաւատամ որ Բէլ Ներբովթայ հոգին յափշտակուած ըլլայ յերկինս բախտից անօրինէն . բայց իր մարմինը ինամբով զմըսուած ու մեծահաւուած գեետով պատած կը հանգչի Գեորգեմանք ըսուած բլրան վրայ, չիրմի մը մէջ, զոր շնորհեց իրեն քաջին Հայկայ սրտին կրօնասէր բարեպաշտութիւնն : Քաջի է չատել իր թշնամին մահուանէն ետքը, և պատուել անոր յիշատակը :

Տամիրսոյ այդ խօսքին, կանգնեցաւ Արա սիրտը ելած . և պատասխանեց այսպէս .

— Աւելի իմն կը պարտաւորես զիս յեւրասագիտութիւն, ո՛վ ամենազօր դէսոյ : Վատ չէ Հայկոյ ցեղը, բայց ասկէց վերջը ասելի պարծանք պիտի համարի իրեն թէ գովուեցաւ Բաբելոնի Ղէսոյէն : Հայկ, Արմինա, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա և Արամ իմ նախահարքս, պիտի ուրասխանան ՚ի Բզնունիս իրենց չիրմին մէջ, լսելով թու միսթարական գովութիւններդ : Մեծ է բարկւոն, զօրաւոր է իր ժողովուրդն, և ունի սրժանաւոր թագուհի մը, գեղեցկութեամբ ու քաջութեամբ հռչակաւոր :

— Մեծը դէսոյ, շարունակեմ ընթերցմունքս, — հարցուց զբազիրն խոնարհուութեամբ :

— Ի՛նչ քանի համար : Տասն և հինգ ժամանակ անցաւ Նիւրպայ թեւոյ տակ, քանի որ Բաբելոն բարձրացած է Եփրատայ բարեբեր ափանց վրայ : Ո՛վ չի գիտեր Ներբովթայ յաջորդաց գործերը : Բաբ, Աննրիս, Արբել, Քայաղ, երկրորդ Արբել և վերջապէս մեծն Ղիսուէ գորգադոյն Ղիք հաղորդ ըրին երկնային փառաց, գրեցին իրենց պատմութիւնը այս որմոց վրայ՝ Աքքատի ցեղին սրբազան տառերով, բայց ասելի որոշ այն աշխարհաց վրայ՝ զորոնք նուանցնին Եպեք և Ստուք ՚ի հիւսիս, Մարք յարևելս, Արաբացիք և Սարա ՚ի հարաւ, Կապաթեանք, Կարբանիտք և ուրիշ շատ ժողովուրդներ՝ իր պատմեն պանծանօք չորից լեզուաց ժողովրդեան փառքը :

— Մոռցար, ասելցուց Հայոց թագաւորը, — քու գործերդ, քու յաղթութիւններդ, ո՛վ դէսոյ, Բակտրիք անգր քան ըզՄարս, և հեռաւոր Ննդկաստան՝ ուսկից կը ծագէ արևն, կը վախնային քու պատերազմական ձիուգ դոմբանէն : Հանցոյցար Մեծին Ղիսոսի, ոչ միայն գեղեցկութեանդ այլ և սրտիկ սրտու թեւեւ համար՝ Կուսուրըդ սիրելի աստուածուհւոյն Ասկաղոնիոյ,

միթէ չընել պատմութիւնն թէ երկնային է քու ծնունդդ :

— Ի բաց թողունք այդ բաները, — ընդհատեց թագուհին : Եատ կերպերով կը տարածուի ու կը փոփոխուի ռամկին շողոքորթական խօսքերն : Կ'ախորժիմ երկնայինչ որ եմս ստուգիւ, և զիս 'ի մօտանց տեսնողն կարծեմ լաւագոյն կը զտնայ քան ինչ որ կ'աւանդէ համբաւն : Երկնային ծննդեան փառքէն ու մեծամեծ յաղթուն թեանց պարծանքէն աւելի կ'ախորժիմ պատուիլ իմ ժողովրդեանս երջանկութեամբ :

— Փառք Եամիրամայ, կեցցէ՛ յաւիտեան, գոչեցին եռանդեամբ բոլոր հանդիսականք. և Արա ուրախութեամբ միաձայնեցաւ հանդիսականաց, Աչ որ երջանիկ էր քան զինքը նոյն ժամուն, ոչ որ քան զինքն աւելի մխիթարեալ :

Անագան էր ժամը, երբ ելաւ նա մեկնելու սրահէն :

— Վաղը, — ըսաւ իրեն թագուհին գաշն ձայնիւ, — վաղը ծանր բաներու վրայ պիտի խօսիմ հետդ :

— Թագուհին պիտի խօսի հետս վաղը. — պատասխանեց պատանին :

— Այո՛, չեն ուզեր :

— Ա՛հ, այո՛. — ըսաւ նա հառաչելով, — բայց Աթոսայի խօսքերն աւելի քաղցր են ինծի :

— Ապերախտ, — գոչեց թագուհին : Զգտա՛ր զԱթոսա Եամիրամայ արքայական պերճանաց տակ : Հայոց թագաւորը պահէ Արայի խօսքերը, և Բարեւոյնի թագուհին յիշէ որ կորուսած է իր սիրտը Միլիդգայ նուիրական մեհենին մէջ :

Կը շարունակուի :

### ԱՌԱՄՔ ԱԶԳԱՅ ԻՆՔ

— Աղբար աղբոր աղբուրն է, թէ ծառունայ՝ պաղ ջուրն է :

— Աշխարհի մալը աշխարհի կը մնայ :

— Աւեր քաղքին չէն անուն :

— Բանտ մի է աշխարհ, մէջէն պակաս չէ աշխար :

— Բարև սուինք՝ խօսեցուցինք, երկու կու տանք ձայնը չի կտրեր :

— Դրացիդ խաղաղ, տունդ ալ խաղաղ :

— Դրացուն խաղը՝ խող կ'երևայ :

— Երկու ստակի զգեստ է, ինչ կայ չկայ վրաս է :

— Զինչ մտածես, զայն երազես :

— Լաւ ձին գարին կ'աւելցնէ, գէշ ձին զամէին :

— Խննդը ունէր բուռ մը չաման, միշտ կը չափէր ամնէ աման :

— Ծուռ ծակը՝ ծուռ չիվի կ'ուզէ :

— Կուռի օրը կու պէտք է, հաշտութեան օրը հաշտութիւն :

— Զուկը ծովումը կը մեծնայ :

— Մահը մահանալով կու դայ :

— Եանը կաղութիւնը մինչև աղուետ տեսութիւնն է :

— Եատ ձեռք շատ կ'ընէ, երկուսը որչափ կարնայ նէ :

— Ոսկին պզտիկ է գինը մեծ :

— Որ ջուրն զիս կը խեղդէ, ես անոր ծով կ'ասեմ :

— Պարապ մնալէն, դատարկ աշխատելու է :

Զուրը չի տեսած, կօշիկս չեմ հաներ :